Начну с вопросов, они неизбежны. Как это советская власть отпустила за границу безвестного юношу непролетарского происхождения, беспартийного, не занимавшего важных постов и вообще непонятно чем и на что жившего? Пример от обратного. Среди русских писателей такое позволяли разве что двоим-троим, в частности Маяковскому с его колоссальной известностью, связями в верхах и дружбой с влиятельными чекистами. Прочие о вояжах за рубеж и не мечтали. Далее. С какой стати мелкому служащему французской фирмы в Турции великодушно возвратили советское гражданство? Причем в конце 30-х, в эпоху небывалой в истории подозрительности. Почему, собираясь перебраться в 1942-м из Турции в Иран (о чем уведомил «кого следует» генеральный консул СССР), он оказался в Союзе?

Задаю вопросы, не задаться которыми нельзя. На них имеется лишь один удовлетворительный ответ: Марк Леви был советским агентом. Есть и ниточка, подводящая к разгадке. Перед самым отъездом из Москвы он подвизался переводчиком в некоем «Аркосе» - чекистской организации, как объясняют знающие люди. Незаметный молодой человек с отменным знанием языков - идеальные для разведчика предпосылки. Каким уж он был агентом, об этом не мне судить.

Еще, почему в разгар войны Леви переменил планы и стремительно въехал в СССР? А вот почему. В Анкаре покушались на немецкого посла Франца фон Папена - турки тотчас углядели руку Кремля и без долгого разбирательства выслали

восвоясь всех советских граждан. И наш герой очутился в Ленинкане.

Тут и рождается главный вопрос: отчего же Леви не возвратился в родной город, а предпочел Армению, где жил тише воды, ниже травы? Пустившись по своей вольной волне домысла, не стану бросать якорь. Отвечу так: оттого, что был умен. Оттого, что знал: его вернувшиеся из-за границы коллеги-разведчики разом исчезли, значит, арестованы. Репрессированы руководители внешней разведки, в тайных службах абсолютно новые лица. Шанс избежать общей участи - не попадаться на глаза, воспользоваться военной неразберихой и массовой эвакуацией, затеряться. Что ж, ему повезло...

Почему Леви выбрал Армению? Ну, выбирать-то, положим, ему не приходилось. Оказался тут - и не рыпайся, не высовывайся, не ищущай судьбу. Вдобавок у него был опыт общения с армянами - четыре одноклассника, не так уж и мало. Резонно предположить, опыт удачный и не суливший осложнений. Симпатичный и толерантный народ, остальное приложится. (Наш соотечественник из «Романа с кокаином» и впрямь ужасно симпатичен: «Этот армянин пользовался всеобщей любовью...») Судя по тому, что в дальнейшем - и после смерти Сталина, и после XX съезда, и после XXII-го - Леви не покинул Еревана, расчет его не подвел...

Два инстинкта

Писательский инстинкт, как и всякий другой, изжить почти невозможно. Начав сочинять и почувствовав, у тебя получается, трудно выправить из души цепку эту страсть. Она чаще всего неистребима. Кто ступил однажды на коварную ее стезю, тот уже человек в известном смысле конченный. Она затягивает, как тряпина, притягивает и не отпускает. Изредка случается - дар уходит, иссыкает, как вода в источнике. Это великая редкость, если даже дар и невелик.

У Марка Леви дар был, и незаурядный. Вряд ли он иссяк и после первой же книжки выветрился бесследно и бестрепетно. Мне почему-то кажется, что с ним пришлось помучиться - душить его, перекрывать ему кислород и никоим образом не позволять прорываться наружу. Зачем? Обладатель дара не мог не понимать: эта напасть погубит его, несдобровать ему с ней. Ибо дар угрожал обладателю, посягал на его жизнь, говорю без преувеличений и метафор. А раз так, его приходилось укрощать, изводить, уничтожать. Это, повторяю, задача, с которой мудро справился. Но Леви смог. Инстинкт жить оказался в нем сильней инстинкта писать.

Я не касаюсь особенностей «Романа с кокаином» и не собираюсь анализировать его. Разговор это сугубо специальный. Не будь у книги замечательных достоинств, не стоило бы городить огород. И все-таки. С иронией относясь к литературной рекламе (это часть не литературы, но рекламы), процитирую два зазывных анонса, выуженных из интернета: «Роман

ՌՈՒՍԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ

ՄԻ ԿՏՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ՈՒՐԱԼԻ ՀՈՂԻ ՎՐԱ

Էջեր Պերմի հայ համայնքի կյանքից

20-րդ դարավերջը աշխարհի ժողովուրդների կյանքում նշանավորվում է միգրացիոն քաղաքականության նոր երևույթներով ու խնդիրներով: Կապված, մանավանդ, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ստեղծված տնտեսական ու քաղաքական իրավիճակի հետ, ժողովուրդների փոխներթափանցումներն ու տեղաշարժերն ընդունում են ավելի մասսայական բնույթ: Ստեղծված տնտեսական-քաղաքական իրավիճակը մեր ժողովրդի մեջ էլ բարձրացնում է արտագնացության ալիք, որի արդյունքում աշխարհի տարբեր երկրներում ու քաղաքներում գոյանում են հայ համայնքի նորանոր օջախներ:

Եվ միանգամայն բնական է, որ հիշված ժամանակներում արտագնացության ամենամասսայական ուղղությունը մեր ժողովրդի համար դառնում է ճանապարհը դեպի Ռուսաստան, որի հետ դարերով գտնվել ենք ընդհանուր պատմամշակութային աշխարհատարածքում: Ու հատկանշական է նաև այն, որ արտագաղթած հայությունը Ռուսաստանի տարբեր ծայրերում ձգտում է ավելի կազմակերպված տեսք տալ իր ապրելաձևին ու գործունեությանը՝ ստեղծելով անհրաժեշտ իրավաբանական կառույցներ, որոնց էլ շաղկապող օղակ է դառնում դարասկզբին ստեղծված «Ռուսաստանի Հայերի Միություն» հասարակական կազմակերպությունը:



Պերմի հայ համայնքի նախագահ Վաղարշակ Սարգսյան

Մեր այս հրապարակումը նպատակ ունի մեր ընթերցողի առջև բացելու Ռուսաստանի առավել գործունյա և աշխույժ համայնքներից մեկի՝ Պերմի մարզի և Պերմ քաղաքի հայության կյանքն ու գործունեությունը բնութագրող մի քանի էջեր: Առաջիկայում մույնպես մեր ամսագրում տեղ կգտնեն Ռուսաստանի տարբեր տարածաշրջանների հայ համայնքների կյանքն ու գործը լուսաբանող նյութեր, որ նաև հիմքեր կստեղծեն նրանց ակտիվ փոխհամագործակցության, մշակութային ու տնտեսական կամուրջների ստեղծման համար:

Պերմի հայ համայնքը կազմավորող «Պերմի մարզի և Պերմ քաղաքի հայ մշակույթի կենտրոն» հասարակական կազմակերպությունը պաշտոնապես իր իրավաբանական գրանցումը ստացել է 2000թ. սեպտեմբերին: Կազմակերպության ստեղծման ակունքների մոտ է եղել նրա այսօրվա նախագահը՝ **Վաղարշակ Սարգսյանը**, որի հետ անցկացված հարցազրույցը նպատակ ունի մեր ընթերցողին ներկայացնելու կազմակերպության ստեղծման և նրա այսօրվա գործունեության մի քանի կարևոր դրվագները:

- Ստեղծման պատմությունը երկար ու դժվարին մի գործընթաց է եղել, - պատմում է Վաղարշակ Սարգսյանը: - Մտահոգումը գալիս է դեռևս 1992-1993թթ.վականներից, երբ քաղաքի մի քանի

ակտիվ ու գործունյա տղաներով հավաքվում էինք ու սկսում տաք բանավեճերը մեր գործունեության ուղղությունների ու նպատակների շուրջ: Խնդրման ժամանակներ էին, ամեն ինչը դժվարությամբ էր տրվում, որովհետև չկար նախադեպ, չկար փորձ, դրան գումարած նաև գեների մեջ դրված ազգային բնավությունը, որ խանգարում է մեր միավորմանը: Անհատ ներկայանալը որևէ շրջապատում կամ կազմակերպության մեջ հրապուրիչ բան է թվում, և դա մեզ խանգարում էր զալ ընդհանուր հայտարարի: Դրանք ժամանակներ էին, երբ որևէ կազմակերպված իրավաբանական կառույցի բացակայության պայմաններում միավորումը ավելի բնական էր թվում որևէ անհատի շուրջ:

Եվ այսպես, տարիների մեր հավաքույթների, բանավեճերի ու խորհրդածությունների արդյունքում աստիճանաբար ձևավորվում է այն նպատակը, ծրագիրը, համուն որի մենք տեսնում էինք կազմակերպության ստեղծման անհրաժեշտությունը:

- Հետագրքի կլինի լսել ձեզանից մի քանի խոսք հենց այդ ծրագրերի ու նպատակների մասին:

Վաղարշակ Սարգսյան - Ես կխոսափեմ ծրագրերի ու նպատակների իրավաբանական ձևակերպումներից, կփորձեմ դրանք հնչեցնել շատ պարզ ձևով: Գիտեք, մենք հավաքվել ու մտածում էինք. մենք հայ ենք, մեզ միավորում է շատ բան՝ լեզու, սովորություններ, անցյալ և այլն, և այլն: Հիմա մենք ապրում ենք այս միջավայրում, և կա վտանգ, որ մենք կկորցնենք այն, ինչը մեզ բնորոշում է որպես հայ տեսակ: Մենք ուզում ենք ընկնել այս միաձուլման կաթսան ու ոչնչանալ որպես հայ տեսակ՝ պահպանելով մեր ֆիզիկական գոյությունը միայն, ուրիշ ոչինչ, թե՛ ցանկանում ենք պահել այն ամենը, ինչը մենք ժառանգել ենք մեր ծնողներից, մեր ծնողներն էլ մեր պապերից, մեր պապերն էլ՝ ապուպապերից և այլն: Մեր լեզուն, մեր խառնվածքը, բնավորությունը, այսպես ասած, միստ ու կացը: Ոչ ոքի մոտ կասկած չկար, և մենք զգում էինք, որ մեզ բոլորիս այս կլոր սեղանի շուրջ է հավաքել հենց այս նպատակը: Ահա հենց սրա շուրջ պիտի միավորվենք, մնացածը՝ գրանցում, աշխատակազմի ստեղծում, ղեկավար կառույցների ընտրություն և այլն, տեխնիկական խնդիրներ էին:

- Եվ նորաստեղծ Պերմի հայ համայնքի պատմության առաջին էջերը գրվում են 2000թ. սեպտեմբերից:

Վաղարշակ Սարգսյան - Դա միայն իրավաբանորեն է այդպես: Իսկ հայության ներկայությունը Պերմի մարզում ունի շատ հին պատմություն: Դեռևս 18-րդ դարասկզբից Հին Ջուդայից Ռուսաստան ներգաղթած հայտնի վաճառականներ Լազարյանների գերդաստանի ներկայացուցիչ Իվան Լազարևը Պերմի մարզի Չերնոզ փողբի քաղաքում գնում է մետաղաձուլական գործարան իր հարակից հսկայական հողատարածքներով, որով էլ սկիզբ է դրվում մարզում նրանց ծավալում ու հիշատակման տնտեսական ու հասարակական գործունեությանը: Տասնյակ տարիներ ու հարյուրամյակներ են անցել, սակայն այսօր էլ նրանց գործունեությունը առանձնահատուկ կարևորությամբ է հիշատակվում քաղաքի պատմության մեջ ոչ միայն որպես խոշոր արդյունաբերողներ, այլ նաև շռայլ բարերարներ ու մշակույթի հովանավորներ:

- Դուք զգու՞մ եք ձեզ այն շառավղի, այն ճանապարհի շարունակողը, որի սկիզբը ժամանակին դրել են մեր հայրենակից Լազարյանները:

Վաղարշակ Սարգսյան - Ես պիտի խոսեի այդ մասին և լավ է, որ դուք տվեցիք այդ հարցը: Մենք, այո, նրանց ժառանգորդն ենք և՛ պատմական, և՛ հոգևոր իմաստով: Այդ կապը, այդ շունչը մենք զգում ենք և այն մեզ ուղղակի պարտավորեցնում է լինելու նրանց բարի գործերի ու ավանդույթների շարունակողը: Մենք այսօր սերտ կապեր ունենք Չերնոզ քաղաքի բնակչության և ղեկավարության հետ: Մեր միջոցներով Լազարյանների կյանքն և գործունեությունը լուսաբանող մեծ բաժին ենք ստեղծել քաղաքի երախտագիտական բանգարանում, ֆինանսավորել ենք քաղաքի կյանքի և Լազարյանների գործունեությանը վերաբերող մեծածավալ պատմական հրատարակությունը: Այսօր մեր



Պերմի հայ համայնքի ներկայացուցիչների հանդիպումը Պերմի մարզպետ Օլեգ Չերկունովի հետ

միջոցներով և աջակցությամբ վերանորոգվում են քաղաքի եկեղեցին և ժամանակին Լազարյանների պատկանող առանձնատներից մեկը, որը դարձել է երկրագիտական թանգարան:

2005 թվականին «Պերմի հայ մշակույթի կենտրոնի» և Չերմոգ քաղաքի դումայի միջև ստորագրվել է համաձայնագիր՝ քաղաքի կուլտուր-մշակութային կյանքի և պատմական հուշարձանների պահպանման ու վերականգնման գործում իրականացվող համագործակցության վերաբերյալ: Մեր գործունեության շնորհիվ այդ համաձայնագրով քաղաքի կենտրոնական փողոցը վերանվանվել է Լազարյանների անունով: Իրականացրել ենք այդ փողոցի ասֆալտապատման և հարակից շինությունների վերանորոգման աշխատանքները:

- Պերմում այսօր աշխատում են մեծաթիվ հայեր, որոնք քաղաքում և մարզում զբաղված են գործունեության տարբեր բնագավառներում: Կա՞ որևէ կապող, շաղկապող օղակ գործունեության տարբեր ոլորտներում զբաղված մեր հայրենակիցների համար:

Վաղարշակ Սարգսյան - Ես կարծում եմ, որ այդ խնդիրը կարևորագույններից մեկը պիտի լինի մեր գործունեության մեջ: Քաղաքում աշխատում են մեր ժողովուրդը ներկայացնող գիտնական-պրոֆեսորներ, դասախոսներ տարբեր բուհերում, բիզնեսի խոշոր ներկայացուցիչներ, ձեռնարկությունների ղեկավարներ, հեղինակավոր շինարարներ և այլն:

Մենք միշտ մտածում ենք՝ ինչպես համատեղել, ֆոկլորապոլիտիկայի ողջ պոտենցիալը մեր մշակույթի, մեր ժողովրդի և հայրենիքի հետ կապերի ստեղծման ու ամրապնդման խնդրում: Եվ բացի այդ շատ կարևոր են համարում պարզ մարդկային շփումները, որ հայը հանդիպի հային, խոսք-գրույց անեն, ճանաչեն, ծանոթանան, կապվեն և այլն: Իսկ դրան լավագույնս կարող են նպաստել կուլտուր-մշակութային զանազան միջոցառումներն ու հավաքները: Վերջերս, օրինակ, Պերմում մենք կազմակերպել էինք մեծատաղանդ մեր հայրենակիցի՝ Ջիվան Գասպարյանի համերգը: Անհնար է բառերով ներկայացնել այն զգացումները, որ համակել էին այդ օրը մեր հայրենակիցներին: Նմանատիպ միջոցառումներ կազմակերպելու և անցկացնելու, ինչպես նաև մեր ազգային մշակույթն ու արվեստը Պերմում ներկայացնելու և պրոպագանդելու խնդրում անփոխարինելի գործունեություն է տանում մեր համայնքի նախագահի տեղակալ Կարեն Պապյանը:

Կարեն Պապյան - Պերմը բազմազգ քաղաք է, այստեղ կազմակերպված համայնքներով ապրում են նախկին ԽՍՀՄ-ի և արտերկրի տարբեր ազգերի ու ժողովուրդների ներկայացուցիչներ: Ես միշտ մտածում եմ, թե ի՞նչ կողմով մենք պիտի երևանք այս բազմազգյան ծաղկեփնջում, ինչպե՞ս պիտի մեզ դրսևորենք, որպեսզի մնա բարի անունն ու հարգանքը մեր նկատմամբ:

- Թումանյանը մի առիթով ասել է, որ մշակույթը ժողովրդի այն անձնագիրն է, որով նա ներկայանում է մյուս ժողովուրդներին:

Վաղարշակ Սարգսյան - Յրաշալի է ասված, այսինքն ազգին, ժողովրդին առաջին հերթին զնահատում են իր ստեղծած մշակույթով:



Մարզի ղեկավարները հափշտակությամբ ծանոթանում են հայ մշակույթի պատմական մասունքներին

Կարեն Պապյան - Այդ սկզբունքով էլ մենք փորձում ենք ծավալել այստեղ մեր գործունեությունը: Մենք շատ նշանավոր, հաջողակ բիզնեսմեններ ունենք այս քաղաքում, որոնք փառք Աստծո, նաև խոր գիտակցում ունեն ժողովրդի կյանքում մշակույթի կարևորության խնդրի վերաբերյալ և մշտապես աջակցում են մեզ մեր ձեռնարկումներում: Մենք հպարտ ենք, որ այս քաղաքում մի կարծ ժամանակ ապրել և ստեղծագործել է Արամ Խաչատրյանը, այստեղ է գրվել «Գայանե» բալետը և առաջին բեմադրությունն ունեցել այս քաղաքում: Մենք հուշասալիկ ենք փակցրել այն տանը, որտեղ ապրել և ստեղծագործել է մեր մեծ հայրենակիցը: Ամենուր հպարտությամբ ենք նշում այն փաստը, որ Ռուսաստանի ամենահեղինակավոր օպերային թատրոններից մեկը՝ Պերմի օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնն այսօր ղեկավարում է մեր հայրենակիցը՝ մեծատաղանդ երաժիշտ, օպերային գործիչ և ռեժիսոր Գեորգի Իսահակյանը, որը մեր մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի տոհմի շառավիղներից մեկն է:

- Ամենուր, որտեղ ոտք է դրել հայը այս մեծ աշխարհում, առաջին հերթին մտահոգվել է իր լեզվի և հոգևոր կերտվածքի պահպանման խնդրով: Դպրոց և եկեղեցի, այս երկու հասկացությունները այսօր էլ հին ու նորաստեղծ հայ համայնքների գործունեության գլխավոր ու առանցքային մտահոգություններն են մնացել:

Վաղարշակ Սարգսյան - Դպրոցը թերևս կարևորն է իր ապագայի մասին մտահոգվող և՛ անհատի, և՛ ժողովրդի համար: Ես ուրախությամբ և հպարտությամբ ուզում եմ փաստել, որ այսօր մենք քաղաքում ունենք կիրակնօրյա հայկական դպրոց, որտեղ մեր երեխաներին ուսուցանվում է հայոց լեզու, զրականություն և հայ ժողովրդի պատմություն: Եվ կարևորն այն է, որ այդ դպրոցը գործում է ոչ թե ինչ-որ նվիրատվությունների, անհատական ներդրում-



Յոգևոր-մշակութային գործերով Պերմի հայ համայնքի նախագահի տեղակալ՝ Կարեն Պապյան



Պերմի մարզի պատվիրակության հանդիպումը Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին II հետ

Երևի և հայթիայթված այլ միջոցների հաշվին, այլ այն, որ մեր հայկական դպրոցի գործունեությունը ֆինանսավորվում է պետական միջոցներով, քաղաքի բյուջեից: Մեզ համար դպրոց պահելը խնդիր չէր լինի, իհարկե, սակայն մեզ հաջողվեց այդ հարցում հասնել պետական հովանավորության, որը կարևորում ենք և՛ քաղաքական իմաստով և՛ դպրոցի հետագա զարգացման ու մեր համայնքի հեղինակության ամրապնդման տեսանկյունից:

Կարեն Պապյան - Դա նաև քաղաքի և մարզային իշխանությունների հարգալից վերաբերմունքի արտահայտության նշան է մեր ժողովրդի և մարզում ու քաղաքում ապրող հայ համայնքի ներկայացուցիչների նկատմամբ:

Վաղարշակ Սարգսյան - Դա այդպես է, և մենք էլ ամեն կերպ ձգտում ենք այդ հարգանքը պահել անհրաժեշտ բարձրության վրա: 2005թ. ապրիլին մեր նախաձեռնությամբ կազմակերպվեց Պերմի մարզպետ Օլեգ Չերկունովի և այլ պաշտոնատար անձանց այցը Հայաստան, որի ընթացքում ստորագրվեցին մարզի հետ Հայաստանի և հայ ձեռնբեղեցների տնտեսական կապերը վավերացնող մի շարք կարևոր համաձայնագրեր: Այդ ընթացքում մարզպետին ընդունեցին Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը, վարչապետը և պաշտոնատար այլ անձինք: Հյուրերը եղան Մատենադարանում, Էջմիածնում, Գառնիում: Ստացած տպավորությունների մասին մարզպետը միշտ հիշում է մեր յուրաքանչյուր հանդիպման ժամանակ:



Պերմի մարզի պատվիրակությունը Սևանի թերակղզում

Մինչ այդ, փետրվարին կազմակերպել էինք Ռուսաստանում Հայաստանի Հանրապետության դեսպան Արմեն Սմբատյանի այցը Պերմ և նրա հանդիպումը մարզպետի հետ: Մեր ջանքերով այսօր Պերմում գործում է Հայաստանի դեսպանատան հյուպատոսությունը, որը մեծ օգնություն է տեղի մեր այն հայրենակիցների համար, որոնք ունեն տարբեր տիպի փաստաթղթերի ձևակերպման ու վավերացման խնդիրներ:

Այսբանից հետո վերջում նշեմ նաև ամենակարևորի մասին: Յուրաքանչյուր համայնք կենդանի և կանգուն է այնքանով, ինչքանով ամուր են նրա կապերը մայր հողի՝ հայրենիքի ու մայր լեզվի հետ: Կտրիկ այդ կապերը և թվածնի պակասից այդ համայնք կոչված մարմինը շուտով կհավի ու կտարալուծվի գոյություն ունեցող զանգվածի մեջ: Հայրենիքի հետ կապերը հեշտացնելու նպատակով էլ այսօր մեր միջնորդությամբ ուղիղ ավիափերթ է գործում Երևանի հետ, Հայաստանի առաջին հեռուստաալիքը մտցված է ամբողջ քաղաքում և մարզում հեռարձակվող հեռուստաալիքների ցուցակը...

Կարեն Պապյան - Նույնիսկ քաղաքի հայտնի «Բայազետ» ռեստորանում մատուցվում են միայն Հայաստանից բերված մթերքներ ու խմիչքներ:

Վաղարշակ Սարգսյան - Այո, դա կարծես թե մի կտոր Հայաստան է Ուրալի հողի վրա:

Ջրույցը վարեց՝ Կորյուն ԲԱՂԱՍՏՐՅԱՆ

ՀԱՎԱՏՔԻ ՄԵԿԴԱՐՅԱ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

101 տարի առաջ Սուրբ Աստվածածնի վերափոխման տոնին ձեռամբ Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկի օծվեց Նոր Բայազետի Սբ. Աստվածածին եկեղեցին:

Եկեղեցին ծնունդ է ժողովրդի և բարեգործ Կոլոտ Հայրապետի համատեղ ջանքերի, հավաստում է արդեն մեկ դար թևակոխած եկեղեցու վկայագիրը:

Գավառի երկրագիտական թանգարանի ավագ գիտաշխատող Հասմիկ Հովսեփյան էլ իրազեկում է, որ Նոր Բայազետի Սբ. Աստվածածին եկեղեցին իր ծնունդով պարտական է նաև հոգևոր առաջնորդ արքեպիսկոպոս Խորեն Մուրադբեկյանին: Դեռևս նորընծա աբեղա, նա հոգևոր ու հասարակական իր գործունեությունը սկսել է Նոր Բայազետի և շրջակա եկեղեցիների կառուցմամբ:

Սբ. Աստվածածին եկեղեցու կառուցմանը ձեռնամուխ եղած որմնադիրները, ինչպես հիշատակում են ժամանակակիցները, գյումրեցիներ էին, բայց շուտով բայազետցի որմնադիր վարպետները այնքան հմտացան, որ ինքնուրույն շարունակեցին հետագա աշխատանքները:

Համաժողովրդական կառույցը, որի երկունքը տևեց շուրջ երեք տարի, վեր խոյացավ քաղաքի նոր ձևավորվող կենտրոնում:

Խ. Մուրադբեկյանի աջակցությամբ եկեղեցին համալրվեց անհրաժեշտ գույքով՝ սրբապատկերներ, հոգևոր գրքեր, խաչեր, ջահ, բուրվառ, մոմակալներ, թավջա վարագույրներ... Հոգևոր հայրերը սպասարկում էին 10-12 ծովս, տարավար տոներին մաղթանքներով շրջում տնետնում:

Եկեղեցու ծնունդից հետո կազմավորվեց 14-15 տարեկան պարմանուհիներից բաղկացած երգչախումբը: Անցյալ դարասկզբին Նոր Բայազետում գոր-



ծում էր արդեն երեք դպրոց՝ ծխական, տարրական և բարձր տարրական, որը կոչվել է նաև քաղաքային ուսումնարան:

Հետագայում ևս եկեղեցին ծառայեց ժողովրդին՝ որպես հավատքի ու սփոփանքի առհավատչա: Այսօր էլ եկեղեցին իր հոգևոր հայրերի սատարմամբ ուղղորդում է ժողովրդին՝ պահպանելու նախնյա ավանդույթները:

ները:

Օրերս Գեղարքունյաց թեմի առաջնորդարանը, Գավառի քաղաքապետարանը և Գեղարքունիքի մարզպետարանը համատեղ տոնեցին Սբ. Աստվածածին եկեղեցու 101-ամյակը: Տոնակատարության շրջանակում կազմակերպվեց խաչի թափող՝ հոգևորականների և հավատավոր ժողովրդի մասնակցությամբ՝ Բազիլիկ եկեղեցուց դեպի Սայր եկեղեցի: Երբ խորհուրդը, ինչպես վկայեց Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ Սարկոս վարդապետ Հովհաննիսյանը, հին և նոր եկեղեցիների միասնությունն է, նաև՝ հին ու նոր ժամանակների ավանդույթների համատեղումը: Հայր Մարկոսը հավելեց նաև, որ վերջին տարիներին նկատելիորեն աշխուժացել է Գավառի հոգևոր կյանքը:

Նարինե ԱՐԵՎԵՍՏՅԱՆ, Գավառ

... Հայոց արշալույսները կծագեն մոր աղոթքով

Epigraphe

Եթե երկրագնդի մակերևույթը միանգամայն հարթ լիներ, օվկիանոսն այն կծածկեր մոտ 2700մ հաստություն ունեցող ջրի շերտով:

Հարուդ ԴՈՒԲԱՆ, Ոհրերտ ՏԱԲԵՐ

օվկիանոսագետներ (ԱՄՆ)

Եթե երկրագնդի մակերևույթը միանգամայն հարթ լիներ և կանգուն մնար միայն Փամբակի լեռնաշղթայի Մայրասարը, ապա այդ երկրագունդ-ջրաշխարհին յոթ մետր բարձրությունից կնայեր Էդվարդ Խլղաթյանի խղացրած Մոր հուշարձանը՝ մշտաբերուն, աշխարհի ու մրա բախտի համար աղոթող եռթյամբ:

Ահա թե ինչու, համաշխարհային այդպիսի աղետ երբեք չի լինի:

Սամվել ԽԱԼԱՍԹՅԱՆ

դրամատուրգ (Հայաստան)



Երբ տպագրվելիս կլինեն այս տողերը, երկրագնդի բազմա-
նուն ու բազմահազար հուշարձանների թվում հառնած կլինի
ևս մեկը՝ Մոր հուշարձանը՝ աննախադեպը, եզակին, վեհն ու
միակը, անկրկնելին՝ ինչպես յոթ հրաշալիքներից յուրաքան-
չուրը, բայց և առավել նվիրական ու հարազատ:

Եվ դա ոչ այն պատճառով, որ Էդ. Խլղաթյանն ավելի հզոր ու
ամենակարող է, քան եգիպտացի Քեոփս փարավոնը, որ իր հա-
մար լեռան մեծությամբ բուրգ-դամբարան կառուցեց, և ոչ այն
պատճառով, որ վանաձորցի քանդակագործ Սարգիս Ղարիբ-
յանն ավելի տաղանդավոր է քան Ֆիդիասը, որ կերտեց Ջևհի
արձանը, և ամենևին ոչ այն պատճառով, որ մայրերին նվիրված

այս հուշարձանի բարձրությունը 72 անգամով գերազանցում է
աշխարհի յոթ հրաշալիքներից Հռոդոսի կոթողին և 23 անգամով
Ալեքսանդրիայի փարոսին, ոչ: Պարզապես, քաղաքակրթության
պատմության մեջ առաջին անգամ կերտվեց Մայրերին նվիրված
հուշարձան, որպես երախտիքի տուրք՝ ծնված և ծնվելիք բոլոր
սերունդների կողմից:

Իսկ արտառնոցն այն է, որ այդ գաղափարի հեղինակ և մեկենաս
Էդվարդ Խլղաթյանը հուշարձանի պատվանդան ընտրեց իր
ծննդավայր Գուգարաց աշխարհի Փամբակի լեռնաշղթայի Մայ-
րասար (նախկինում՝ Ղարաղայ) լեռան կատարը, որի բարձրու-
թյունը ծովի մակերևույթից 2700մ է:

Expositio

Էդվարդ Խղաթյան. Ծնվել է 1955թ. փետրվարի 18-ին, Կիրովական (այժմ՝ Վանաձոր) քաղաքում: Ավարտելով միջնակարգը, մեկնել է Ռուսաստան, բարձրագույն կրթություն ստացել Մոսկվայի Բաումանի անվան համալսարանի շինարարական ֆակուլտետում՝ ճանապարհների և կամուրջների շինարարությունների մասնագիտությամբ: Զբաղվել է ձեռներեցությամբ: 1988թ.-ին, իր բոլոր միջոցները ներդնելով, ձեռք է բերել գեներ և զինամթերք, տեղափոխվել Հայաստան, կազմակերպել է «Անի» ջոկատը, որը նրա հրամանատարությամբ ակտիվ մասնակցություն է ունեցել պաշտպանական մարտերին:

Աշխատել է Կիրովականի հացի կոմբինատի գլխավոր տնօրենի տեղակալ, «Արփի» բերքի գլխավոր խմբագրի տեղակալ, «Հայփոստ» ՓԲԸ-ի Լոռու մարզի մասնաճյուղի փոխտնօրեն, նույն ՓԲԸ-ի Լոռու մարզի ներկայացուցչության ղեկավար:

2002թ.-ից՝ «Հայփոստ» ՓԲԸ-ի Վանաձորի մասնաճյուղի տնօրենն է:

1996 – 1999թ.թ. և 2002 – 2005թ.թ. – ին ընտրվել է Վանաձորի համայնքի ավագանու անդամ:

Ակտիվ մասնակցություն է ունենում հասարակական, մշակութային կյանքին: Մշակույթի, արվեստի, գրականության ոլորտների շնորհալի սկսնակների և տաղանդավոր գործիչների մեկնասան է:

Էդ. Խղաթյանի նախաձեռնությամբ և հոգածությամբ 2005թ.-ին ստեղծվեց «Գաղթի ճանապարհին» կտավը (նկարիչ՝ Կարեն Գալթյան), որը բազմափառապար ուխտագնացության երթով, Վանաձորի Սրբ. Աստվածածին եկեղեցու բակից տեղափոխվեց Գյումրի - Արմավիր - Էջմիածին ուղեբերով, ամենուրեք, տասնյակ համայնքներում արժանանալով ջերմ ընդունելության: Ստանալով Ամենայն հայոց վեհափառի՝ Գարեգին 2-րդի օրհնությունը, ուխտագնացները կտավը տեղափոխեցին Երևան՝ Ծիծեռնակաբերդ և նվիրեցին Եղեռնի թանգարանին:

Էդ. Խղաթյանի նախաձեռնությամբ ու հոգածությամբ Վանաձորում, 2006թ.-ին հյուրընկալվեցին «Կիլիկիա» առաջատար մավաստիները, որոնց մվիրաբերվեց ոսկե կրծքանշան՝ առաջատար մավի և Արարատի պատկերով, «Ծովակալ» խորհրդանշանային տիտղոսով:

Էդվարդ Խղաթյանը շուրջ երկու տասնյակ երգերի հեղինակ է: Դրանք կատարվում են հանրապետության երգարվեստի աստղերի կողմից, հնչում են հանրապետական ռադիոյով, սփռվում հեռուստատեսային եթերում և դասվում են հանրության սիրված երգերի շարքում:

Պարգևատրված է Ֆրիտյոֆ Նանսենի անվան միջազգային «Ոսկե մեդալով», Մաշտոցի անվան հուշամեդալով:

Էդվարդ Խղաթյանի նախաձեռնողական

տաղանդով, կազմակերպչական ունակությամբ, անշահախնդիր մեկենասությամբ կերտվեց մայրերին նվիրված Մոր հուշարձանը (քանդակագործ՝ Սարգիս Կարիբյան), որը սեպտեմբերի 10-ին կտեղակայվի Լոռիում, Փամբակի լեռնաշղթայի Մայրասար լեռան կատարին: Շուտով Վանաձորում կբացվի Մայրության թանգարանը, որը, դարձյալ, ստեղծվել է հայրենասեր հայորդու կողմից և նրա միջոցներով:

Հայրը՝ մանկավարժ **Ազատ Խղաթյանը**, ծնվել է 1910թ.-ին, Արևմտյան Հայաստանի Մշո Բուլանդուղի Շեղաղուի գյուղում: Հինգ տարեկանում, Մեծ եղեռնից մազապարծ, գաղթել, բնակություն է հաստատել Լոռու Վարդանու գյուղում (այժմ՝ Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղամաս):

Գյուղի դպրոցի հիմնադիրն է:

Մահկանացուն կնքել է 1977թ.-ին:

1993թ.-ին, ՀՀ պատգամավորների Վանաձորի քաղաքի ղեկավարի նախագահության որոշմամբ Վանաձորի թիվ 18 դպրոցը անվանակոչվեց հիմնադրի՝ **Ազատ Խղաթյանի** անունով:

Մայրը՝ մանկավարժ **Օֆելյա Հարությունյանը**, ծնվել է 1924թ.-ին, Գավառում:

Երկար տարիներ ամուսնու՝ Ա. Խղաթյանի հետ դասավանդել է դպրոցում: Ծնել է դաստիարակել է երեք որդու և երկու դստեր:

Մահկանացուն կնքել է 1998թ.-ին:



Մայրական սիրո թեման մարդու համար հավերժական է: Դեռ նախապատմական ժամանակներից սերը մոր հանդեպ դիտվում է իբրև շնորհակալության, մեծարանքի, երախտագիտության խոսք՝ ասված որդու կողմից, բայց հասարակության անունից:

Մեր նախնիներն իրենց բնաշխարհը կոչեցին **հոր անունով՝ ՀԱՅՐԵՆԻՔ**:

Մեր նախնիներն իրենց լեզուն կոչեցին **մոր անունով՝ ՄԱՅՐԵՆԻՔ**:

Եվ հետո գնահատեցին այդ սրբություններն իրենց լինելիության հիմքով, համակցեցին, միաձուլեցին դրանք ոգեղեն շաղախով, ի լուր աշխարհի պարզեցին հին ու գալիք բոլոր սերունդների հավատամքը՝ **ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔ**:



Եվ պատահական չէ, որ հենց հայորդու մեջ պիտի ծնվեր մայրերին նվիրված հուշարձան ունենալու գաղափարը: Եվ պատահական չէ, որ այդ հոյակերտն ու հայակերտը աշխարհին ու իր գավակներին պետք է հառներ վեհագույն բարձրությունից՝ որպես մի պահապան հրեշտակ, որպես մշտաբուն աղոթք՝ առ Արարիչ, մշտաուն օրհնանք՝ զավակներին:

Կարիք կա՞, արդյոք, հիշատակելու թե ինչպիսի խոչընդոտներ են հաղթահարվել Էդվարդ Խղաթյանի կողմից այդ բաղձալի նպատակին հասնելու համար: Սակայն ամեն մի դժվարություն ոչինչ է այն հզոր կամքի ու սլացք-մտքի առջև, որ առաջնորդում է նրան: Այդ կամքն ու միտքը ծնունդն են մոր նկատմամբ ունեցած որդիական մեծ սիրո և անհատակ երախտագիտության:

Նրանք, ովքեր մայրամալու երկնատու բախտն են ունեցել, նրանցն է այս հուշարձանը, որ ուխտատեղի է դառնալու բոլոր սերունդների համար:

Նրանք, ովքեր դեռ չեն մայրացել, բայց Աստծո կամոք կմայրանան՝ արժանանալով կյանքը հավերժացնողների մեծագույն բախտին, նրանցն է այս հուշարձանը:

Այսուհետ, ամեն լուսաբացի, արևի առաջին ճառագայթները



կլուսավորեն ոչ թե մեր լեռնագագաթները, այլ Հայոց մոր լուսապսակ ճակատը:

Այսուհետ, հայոց արշալուսները կծագեն մոր աղոթքով...

Եվ եթե Էդվարդ Խղաթյանն այս մեծագործությամբ իր երախ-



150

տագիտությունն ու սերն է հավերժացրել իր և աշխարհի բոլոր մայրերի նկատմամբ, ապա մենք, յուրովի, հպարտանում ու պանծալից հրճվանք ենք ապրում այդ կոթողի մեջ տեսնելով նաև յուրաքանչյուրիս սերն ու երախտագիտությունը՝ մեր մայրերին:

Այս հուշարձանի լինելիությամբ էղվարդ խղաթյանը մեր հասարակությանը, բոլոր ժամանակների սերունդներին պարզեց բարոյական այնպիսի մի արժեքի ամբողջականություն, որը եղել և մնում է բոլոր մեծ հումանիստների հավատո հանգանակը՝ **մենք՝ բոլորս, քույր ու եղբայրներ ենք**: Այդ հավատամքը մարդկանց գիտակցության մեջ արմատավորելու, դրանով բոլորին միատեղելու նպատակը դեռևս լիովին իրականացված չէ: Դեռ ոչ մեկին չի հաջողվել հասնել դրան: Միայն այս դեպքում, միայն այս հուշարձանի ուխտագնացության ժամանակ է, որ այդքան մասսայաբար ու այդքան միակամ մենք ու մեր սերունդները կգիտակցենք դա:

Ուստի, երիցս ու յոթնապատիկ՝ **Շնորհակալություն քեզ՝ էղվարդ խղաթյան:**

... Երբ տպագրվելիս կլինեն այս տողերը, երկրագնդի բազմաճյուղն ու բազմահազար հուշարձանների թվում հառնած կլինի ևս մեկը՝ ՄՈՐ ՀՈՒՇԱՐԶԱՆԸ:

Այդ կոթողը, որ խաչաձև պատվանդանի հետ միասին կունենա 4,5 մետր բարձրություն, աշխարհին կհառնի 2707 մետր բարձրությունից:

Հուշարձանը Մայրասարի կատար կտեղափոխվի հազարավոր պատանդների և երիտասարդների երթով, նրանց ջանքերով: Մասնակիցներից յուրաքանչյուրն իր հետ կտանի նաև հիմնադրեքի համար անհրաժեշտ շինանյութի որոշակի պաշար:

Նրանք, ովքեր կհաղթահարեն բարձունքը, հատուկ գալարաթղթի վրա կգրեն իրենց մայրերի անունները: Գալարաթուղթը կդրվի մետաղյա պարկուճում, որը կամփոփվի հուշարձանի հիմքի մեջ: Առանձին մի պարկուճի մեջ կտեղակայվի այն գալարաթուղթը, որի վրա գրված կլինեն Հայոց հերոսուհի մայրերի և Արցախյան հերոսամարտում զոհված մարտիկների մայրերի անունները:

Իսկ նրանք, ովքեր ի վիճակի չեն լինի բարձրանալ լեռան կատարը, հուշարձանը կարող են դիտել Վանաձորի արևելյան մուտքի մոտ կառուցած աշտարակից՝ հատուկ հեռադիտակով:



Տարիներ առաջ, 1990թ., էղվարդ խղաթյանը գրանցելով բնաշխարհի աղբյուրների, լեռնագագաթների, բացատների օտարամուտ անունները, խորհրդակցելով բանիմաց ծերերի հետ, հանդես եկավ այդ անունները հայեցի դարձնելու, նորովի անվանակոչելու նախաձեռնությամբ: Ցավոք այդ հայրենասիրական առաջարկը մնաց ձայն բառառո հանապատի: Հուշարձանի լինելիությամբ, բնական է, որ Ղարաղայ անունը չէր կարող մնալ և էղվարդ խղաթյանի առաջարկով հանրությունն արդեն լեռը կոչում է **ՄԱՅՐԱՍԱՐ**:

Ղարաղայն այլևս Մայրասար է:

Մայրասարն այլևս պատվանդան է մեր երախտիքի և սիրո մարմնացումը հանդիսացող մորը պատկերող կոթողի համար:

Մայրասար լեռան կատարն այլևս հավերժորեն ուխտատեղի է բոլոր զավակների համար:

Այս ամենն այն իրողությունն է, երբ յուրաքանչյուրս անկրկնելի զգացումով ենք համակվում. վեհանուն է քո ժողովուրդը, քո և աշխարհի մարդկանց առջև, վեհանուն ես ինքը՝ դու, որ այդ ժողովրդի զավակն ես: Հպարտանում ես, որ ժամանակակիցն ու վկան ես եղել այդպիսի մի իրադարձության:

Թող ներվի ինձ անձնական զեղումի համար, սակայն չեմ կարող խոսքս չավարտել իմ հոգևոր հրաշք-եղբորը, իմ ժողովրդի հերոս զավակին, իմ գերդաստանի հոգևոր-հայր – կնքահորը՝ էղվարդ խղաթյանին չասելով.

- ՀԱՆՆԼ ԼԻՆԻ ԿԵՐԱԾԴ ԿԱԹԸ, ԷԴԻԿ:

ՕՐՀՆՎԻ ԱԶԳԱՆՎԵՐ ՈՐԴԻ ԲԵՐԱԾ ՄԱՅՐԻ:

Սամվել ԽԱՆԱԹՅԱՆ

Epilogos

Շուտով Վանաձորում կբացվի դարձյալ աշխարհում իր նախադեպը չունեցող **Մայրերի թանգարանը**, որ ստեղծվում և այժմ ցուցադրության կազմակերպման գործընթացում է թանգարանի նախաձեռնող-հիմնադրի՝ էղվարդ խղաթյանի ղեկավարությամբ:

Այդ մասին՝ հաջորդիվ:

ԱՅՍՊԵՆ ԵՆ ԵՐԿԻՐԸ ՈՒՐԻՇ ԵՐԿՐԻ ՆՎԻՐՈՒՄ

Մի քանի խոսք Վեներա Գասպարյանի մասին

Այս կինը զարմացնում է իր շքայնությամբ: Բնությունը նրան առատորեն շնորհել է հոգևոր արժեքներով: «Ազգ» թերթի խմբագրատանը կարճատև մի գրույց ունեցանք իր և իմ լավ բարեկամ, Հայաստանում և սփյուռքում ճանաչված մշակութային գործիչ Ժակ Հակոբյանի մախաձեռնությամբ: Եվ ես անչափ հետաքրքրական մի հայուհի ևս հայտնաբերեցի:

Ինքը՝ Մուղղվայի Հանրապետությունում հայ համայնքի ղեկավար, «Տաթևիկ» հոգևոր-մշակութային կենտրոնի հիմնադիր ու ղեկավար Վեներա Գասպարյանն իր մասին քիչ բան պատմեց: Նրա մասին տեղեկություններ քաղեցի իր բերած մուղղվական մամուլից: Իսկ արևալամ ու գինեվետ այս երկրի մամուլը պարզապես հիացմունքով է արտահայտվում մեր հայրենակցուհու մասին: «Մուղղվական երկնակամարում փայլող հայ Վեներան», ըստ թերթի հաղորդագրությունների, իսկապես հիացրել է այս հիանալի երկրի մարդկանց: Մուղղվացիները և Մուղղվայի բնակիչները նրան տեսնում են համապետական տոների ժամանակ, Մուղղվային նվիրված նրա երգը մեծ հաճությամբ ունենալով: Են երկրի նախագահ Վլադիմիր Վորոնինն ու նրա մերձավորները: Որևէ տոն ու տոնակատարություն չի լինում Մուղղվայում, որտեղ չփայլի մեր այս հայուհին՝ կանանց միջազգային օր՝ մարտի 8-ու փետրվարի 23, Ամանոր ու ընթացիկ տոներ: Դաշնակահարուհի, երգչուհի, բանաստեղծուհի, խմբավար Վեներա Գասպարյանը ամեն անգամ մի հաճելի անակնկալ է պատրաստում: Ու դա է պատճառը, որ նրան սիրում ու հարգում են ոչ միայն Մուղղվայի հայ համայնքում (իսկ համայնքի անդամների թիվն այսօր 10-12 հազարի է հասնում), այլև՝ տեղացիները:

Վեներայի կենսագրությունը հետաքրքրական դեպքերի և իրադարձությունների մի շարան է: Արցախում ծնված ու ապրած աղջիկը շատ բանով պարտական է հորը: Ստեփանակերտի և Շուշվա գլխավոր ինժեներ-շինարար Մուշեղ Գասպարյանն իսկապես շատ բան է արել աղջկան մշակույթի, հոգևոր դաշտում պահելու համար:

- Ես երախտապետ եմ հորս: - ասում է Վեներան: - Նա շատ կիրթ և հոգևոր հարուստ մարդ էր: Երեք ինստիտուտ էր ավարտել, և մեզ՝ իր վեց երեխաներին, տվել է այն ամենը, ինչ կարողացել է: Բայց նա իր հիմնական հույսը, չգիտես ինչու, կապում էր ինձ հետ...

Պրոֆեսիոնալ դաշնակահարուհի դառնալու համար Վեներան նույնպես պարտական է հորը...

...Հինգ տարեկան փոքրիկ աղջնակը տան բակում, ասֆալտի վրա նկարել էր դաշնամուրի ստեղծեր և «նվագում էր»: «Հենց վաղը դու դաշնամուր կունենաս», ասել էր հայրը և կատարել խոստումը: Աղջիկը Ստեփանակերտում երաժշտական որակյալ կրթություն ստանալուց, տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, սովորել է Երևանի պետական կոնսերվատորիայի դաշնամուրի դասարանում, ստացել պրոֆեսիոնալ դաշնակահար



րուհու մասնագիտություն, որից հետո ստեղծել ու ղեկավարել է եռաձայն բազմաձայն երգչախումբ, որում ընդգրկված էր... 300 մարդ:

Հրաշալի, թեթև ապագա էր խոստանում կյանքը նրան: Սակայն սկսվեցին արցախյան իրադարձությունները: Նա իր ընտանիքի հետ ապաստան գտավ համեմատաբար խաղաղ Մուղղվայում, ուր կարելի էր շարունակել արվեստագետի իր ուղին: Սակայն մեկ սենյականոց բնակարանում Վեներան ու իր ամուսինը՝ Կարեն Դավթյանը, նրանց գավակները՝ Տաթևիկն ու Դավիթը սոսկ իրենց անձնական մի քանի իրերն ունեին: Դմիտրի Կաբալևսկուն ու Եվգենի Կրիլատովին հիացրած, նրանց բարձր գնահատականին արժանացած Վեներա Գասպարյանը պետք է նորից սկսեր, սկսեր ոչնչից: Ու հենց առաջին գիշերը, կարդալով տեղական թերթում տպագրված հայտարարությունը... զնում են Petroff մականիշի դաշնամուր: Գիշերվա կեսին էլ դաշնամուրը բերում են իրենց տուն:

Մուղղվայի լավագույն ժուռնալիստներից մեկին՝ Իրինա Ազապիհայանն ապացուցել են Վեներայի հոգևոր հզոր թափը, ամեն ինչում փայլելու նրա տաղանդը:

Սակայն սկզբնական շրջանում ամեն ինչ հեշտ ու հանգիստ չի եղել:

1988 թվականն էր: Հրաշալի, բայց օտար երկրում ապաստանած այս հայերը ևս ամեն օր ամենադժգին ու զգրելի պատմություններ էին լսում հայերի մասին, որոնք խորտակվող Խորհրդային Միության կենտրոնական հեռուստաալիքները մատուցում էին բազմամիլիոնաճան լսաճանին:

- Մուղղվայում եղած առաջին տարիներին ես քիչ էր մնում լացելի ամոթից, - հիշում է Վեներան: - Լրատվամիջոցներով, հատկապես հեռուստատեսությամբ եթե խոսում էին մեր՝ հայերիս մասին, ապա միայն բացասական շեշտադրությամբ: Ես փորձում էի մարդկանց բացատրել, թե իրականում ինչ է կատարվում իմ հայրենիքում՝ լեռնային Դարաբաղում: Սակայն հանդգցեցի, որ դա արդյունավետ ճանաչարի չէ: Եվ որոշեցի գործ անել, գործ, որի շնորհիվ ես օտարազգիներին կապացուցեի իմ հպարտ ու ազատատենչ ժողովրդի իրական ոգին, նպատակները, իղծերը:

Իսկ Վեներային չնկատել չէր կարելի: Օտարազգիներին նա առաջարկում էր ծանոթանալ հայ հոգևոր բարձր արժեքներին, հայոց սովորույթներին, տոներին, անգամ հայկական կոնյակին ու խոհանոցին: Նա համերգներ էր կազմակերպում, հրավիրում էր բազմաթիվ երգիչների, երաժիշտների, արվեստի ոլորտի այլ մարդկանց, գիրք գրեց ու հրատարակեց հայերի մասին:

Առավել կարևոր էր Վեներայի գործունեությունը Մուղղվայի հին հայկական առաքելական եկեղեցու վերաբացման գործում: Մուղղվայի գերեզմանատներից մեկում գտնվող եկեղեցական գեղեցիկ շինությունը տեղացիները միշտ էլ համարել էին լեհական: Քիշնկցիները հենց այդպես էլ կոչում էին այդ եկեղեցին՝ «Լեհական» կամ «կաթոլիկ»: Սակայն Վեներան իրական գիտակցում էր, որ այն զուտ հայկական է... Բազմաթիվ արիսկներ քրքրեց, վկայություններ ու փաստաթղթեր գտավ, որոնք ամփստելիորեն հաստատում էին Քիշնկի այդ հնամյա եկեղեցու և գերեզմանատան (որտեղ ավելի քան 2 հազար հայ է թաղված) հայկական ծագումը: Դակաս ջանքեր չպահանջվեցին Մուղղվայի և Քիշնկի իշխանություններին այս համոզիչ փաստերը ապացուցելու, պաշտոնական ճանաչումը վաստակելու համար: Եվ, ահա, աշխարհի օտար ճանաչարիներին ևս հայ եկեղեցի փրկվեց: Ու մտածում են, թե որն է ավելի ժժվար ու գնահատելի՝ եկեղեցի կառուցելը, թե՞ այն իր ժողովրդին վերադարձնելը:

Վեներա Գասպարյանը Մուղղվայի եթնիկ մշակութային ընկերությունների վարչության, համակարգող խորհրդի, «Մուղղվայի կանայք» կազմակերպության բյուրոյի անդամ է: Դեկավարելով Մուղղվայի Հանրապետությունում հայ համայնքի աշխատանքները, նա ղեկավարում է նաև Մուղղվայի հայ կանանց միությունը: Նրա անունը գրանցվել է ամերիկյան հանրահայտ «Ով ով է» ժողովածուում, Ամերիկյան կենսագրական ինստիտուտը 2003 թվականին նրան ճանաչել է որպես «Աշխարհի կին»: Մուղղվային ցուցաբերած առանձնահատուկ ծառայությունների համար երկրի նախագահ Վլադիմիր Վորոնինի հրամանով նրան մուղղվական քաղաքացիություն է շնորհվել պաշտպանելով հայկականը:

Ինչպես ասում են Մուղղվայում՝ «Վեներան Մուղղվային է նվիրել իր սիրտը, իր հոգին և ամենակարևորը՝ իր հպարտ երկրի՝ Հայաստանի մի կտորը»:

Սերգեյ ԳԱԼՈՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ՄԱԿՆՇՈՒՄ

Կառավարության որոշմամբ, 2007թ. հունվարի 1-ից ՀՀ տարածք ներմուծվող սննդամթերքի վրա պետք է լինի հայերեն մակնշում՝ պիտակի վրա պետք է գրված լինի տվյալ ապրանքի բաղադրությունը, դրա մասին տեղեկատվություն: Հակառակ դեպքում՝ այդ ապրանքները Հայաստան չեն կարող ներկրվել:

ԱՐՄԵՆՊԵՆ

ՎԻԿՏՈՐ ՉԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ

Խոշոր անհատների մասին հիշողություններ գրելը հղի է մի վտանգով, որից չեն կարողանում խուսափել շատերը: Դա խոշոր անհատի մասին պատմելիս սեփական անձը հնարավորին չափ շահեկան ներկայացնելու գայթակղությունն է: Կախված հեղինակի բարոյական նկարագրից ու նպատակներից, նման հիշողություններն ստանում են ամենատարբեր իմաստ ու որակ: Այդ իսկ պատճառով Վիկտոր Չամբարձումյանի նման խոշոր անհատի մասին հիշողություններ գրելը բավականին լուրջ փորձություն է ամեն մեկի համար, ով այդ նպատակով գրիչ է առնում ձեռքը...

Վիկտոր Չամբարձումյանը եղել է իմ Ուսուցիչը, որին վստահել և որից սովորել են ամենից ավելի: Սովորել են ոչ միայն գիտություն, այլ նաև վերաբերմունք գիտության հանդեպ, մարդկանց հանդեպ, գործի հանդեպ: Թե որքան է հաջողվել սովորել, դա այլ հարց է, և եթե ինձ ավելին չի հաջողվել, դա արդեն իմ թերությունն է, որը ոչ մի կապ չունի Ուսուցչի աստվածատուր շնորհի հետ...

Մինչև այժմ էլ, Ուսուցչի մահվանից տասը տարի անց, շատ հաճախ ինչ-որ բան ձեռնարկելիս ինքս ինձ բռնում եմ այն բանում, որ փորձում եմ ձեռնարկվող քայլը գնահատել նրա աչքերով: Եվ առաջին բանը, որ միտքս է գալիս պատեհ-անպատեհ, նրա տարբեր առիթներով արած արտահայտություններն են: Համկարծ հիշում եմ ինչ-որ մի միտք, որ արտահայտել է Ուսուցիչը, չնայած միշտ չէ, որ հաջողվում է վերականգնել, թե ինչ առիթով է այն ի հայտ եկել: Մի անգամ խոսում էինք մեր ազգային նկարագրի մասին, և նա հանկարծ նկատեց.

- Երբ հարցնում եմ, թե ինչ կրոն եմ դավանում, ես պատասխանում եմ, որ հայ քրիստոնյա եմ: Դա անպայմանորեն չի նշանակում, թե ես լուրջ հավատացյալ եմ: Հայ քրիստոնյա ասելով, մենք նույնացնում ենք մեզ այն արժեքների հետ, որոնք մեր ազգին հատուկ են եղել ամենավաղ ժամանակներից:

Տասնամյակներ անց ես փորձում եմ նորից ու նորից գնահատել այդ միտքը: Եվ ամեն անգամ ավելի ու ավելի եմ համոզվում այդ սահմանման ճշգրտության մեջ: Փորձելով խորանալ հայ քրիստոնյա հասկացության մեջ, զգում եմ, որ դրանով արտահայտված է մեր և ազգային, և բարոյական կերպարը, այն ամենը, ինչ մեզ են փոխանցել մեր նախորդ բոլոր սերունդները:

Համբարձումյանին ճանաչողները նույնիսկ նրա պատկառելի տարիքում միշտ էլ հիանում էին հատկապես մի բանի վրա: Նա կարող էր գիտական խնդիրը, որով երբեք չէր զբաղվել, լսել որոշ ժամանակ, ապա այն քննարկել այնպես, ասես աշխատել էր և շարունակում էր աշխատել այդ բնագավառում:

Մի առիթով 79-80 թվականներին նա ինձ հանձնարարել էր մողելավորել բռնկվող աստղերի ագրեգատում աստղերի բռնկվումները և այդ մողելն օգտագործել ըստ բռնկման հաճախականությունների բաշխման ֆունկցիայի համար իր ստացած



ամալիտիկ լուծման կայունությունն ստուգելու համար: Խնդիրն ընդհանուր առմամբ շատ պարզ էր, շատ լուրջ ջանքեր չէր պահանջում: Բավականին արագ ներկայացրի պատահական թվերի միջոցով (Մոնտե-Կառլոյի դասական մեթոդները հիշեցնող ձևով) իմ ստացած արդյունքները, որոնք, ճիշտն ասած, ինքս ինձ համար դեռ չէի կարողացել բացատրել: Խնդիրը թվում էր շատ պարզ, բայց ստացված արդյունքները ոչ մի բացատրության չէին ենթարկվում: Դրանք Ուսուցչի մոտ տարա, մտածելով, որ այն ինչ էս չեն հասկանում, նա կբացատրի ինձ:

Մենք որոշ ժամանակ միասին էինք փորձում հասկանալ ստացված թվերի իմաստը, սակայն պարզվեց, որ դա այնքան էլ հեշտ չէ: Նա ինձ հարցրեց, թե ինչպես եմ ստացել դրանք, և ես սկսեցի մանրամասնորեն բացատրել: Քայլ առ քայլ նկարագրում էի հաշվարկների ալգորիթմը, և հանկարծ գլխի ընկա, որ մեկ քայլ անց սխալ բան եմ ասելու:

- Հետո՞, - հարցրեց նա, զգալով իմ հապաղումը:

- Ես հասկացա, - ասացի:

- Դե բացատրեք, - պահանջեց նա:

- Ես հասկացա, թե որտեղ եմ սխալ թույլ տվել, - ամոթահար ասացի ես և նկարագրեցի ալգորիթմի չարաբաստի մասը, որը թեև լուրջ թվել էր առանց նույնիսկ կասկածելու, որ նման հարթ տեղում կարելի է սայթաթել:

- Լավ, - իմ բացատրությունը լսելուց հետո գլուխը հանդիմանանքով թափահաքեց նա:

- Եթե ես մի քիչ ավելի խիստ մարդ լինեի, ձեզ կհանձնարարեի, որ հիմա էլ վերականգնեք ձեր ստացած թվերին համապատասխանող բաշխումը: Բայց մենք առաջին հերթին պետք է փորձենք գտնել ճիշտ լուծումը...

Մի քանի ժամ հետո ճիշտ լուծումն արդեն պատրաստ էր: Նաև ես էի ներքուստ հասցրել փոխվել ու գիտակցել մի կարևոր բան. ամեն մի խնդիր պետք է մանրամասն քննարկել ու ըմբռնել մինչև վերջ, անկախ թվացյալ պարզությունից: Եվ այն, որ ամեն դեպքում մենք առաջին հերթին պետք է փորձենք գտնել ճիշտ լուծումը:

Որքան հիշում եմ, դեռևս մի ամիս չէր անցել ինձ աստղադիտարանի փոխտնօրենի պաշտոնում նշանակելուց հետո, երբ նա պետք է գնար Մոսկվա՝ աչքերի վիրահատության: Իսկ դիտարանը պատրաստվում էր մեծ միջազգային գիտաժողովի: Մեկնելու նախորդ օրը նա ինձ կանչեց, որպեսզի քննարկեմք իմ անելիքներն իր բացակայության ընթացքում, որը տևելու էր բավականին երկար, այդ թվում՝ նաև գիտաժողովի ընթացքում:

- Եթե անհրաժեշտ գտնեք որևէ բան ձեռնարկելիս խորհրդակցել ինչ-որ մեկի հետ, արեք դա, - հրաժեշտ տալուց առաջ վերջին խորհուրդը տվեց նա: **- Բայց կայացրեք այն որոշումը, որը դուք եք ճիշտ համարում:**

Ինքնավստահությամբ զինելու այդ դասը, իմ կարծիքով, իմ կյանքում աննախադեպ էր: Ես ոչ ոքից մինչև այդ նման դասա-հուրդում և գործելակերպի նման պատ-հում չէի ստացել: Եվ կրկին, քսանամյա հեռավորությունից ժամանակ առ ժամանակ վերադառնալով այդ խոսակցությանը, ես ավելի ու ավելի եմ գնահատում Ուսուցչի խորհուրդը: Գուցե այն ժամանակ նույնիսկ մտքովս անցել էր, թե որքան է նա վստահում ինձ, որ նման խորհուրդ է տալիս: Բայց հիմա դրա մեջ ավելի շատ տեսնում եմ պատասխանատվություն վերցնելու և, նշանակում է, ամեն ինչ լուրջ կշռադատելու պահանջ:

Մեր շրջապատում դիտելով մանր ու խոշոր տարբեր չինովնիկների վերաբերմունքն իրենց գործի հանդեպ, հաճախ կարելի է համոզվել, որ նրանց զգալի մասը գտնում է, որ պաշտոնը տալիս է միայն իրավունքներ: Այն, որ իրավունքը պատասխանատվության ու պարտքի ածանցյալն է, շատերն են աշխատում չհիշել: Ուսուցիչը շատ լավ գիտեր իր ուժն էլ, իրավունքներն էլ, գիտեր, թե ինչեր կարող է անել ցանկության դեպքում: Բայց երբեք չէր մոռանում, որ իր հսկայական ուժը պայմանավորված է այն պատասխանատվությամբ, որ օր օրի կրում էր ինքը: Եվ ցանկանում էր, որ իր շրջապատի մարդիկ ևս հասկանան դա...

Դարաբաղյան շարժումը դեռ չէր սկսվել: Բայց արդեն զգացվում էին տարբեր խնդրումներ, բնապահպաններն սկսել էին բարձրաձայն խոսել և ասում էին, թե նույնիսկ ցույցեր են սպասվում: Մինչ այդ իշխանությունների կողմից չարտոնված միակ ցույցերը եղել էին պարիլի 24-ին, որոնք ունեին որոշակի ուղղվածություն, և դրանց մասնակցող ամեն ոք իրեն մի քիչ ավելի հայրենասեր էր զգում:

Ուսուցիչը, որը միշտ հարգել էր պետականության զգացումը և համոզված էր, որ Հայաստանը սոցիալիզմի տարիներին շատ բաների է հասել, մի օր հանկարծ ասաց.

- Հետաքրքրական կլիներ, եթե մեկը երևակայական պատմվածք գրեր, թե ինչպես կզարգանար Հայաստանը, եթե այստեղ բոլշևիկյան հեղափոխություն եղած չլիներ, և երկիրն ընտրած լիներ կապիտալիստական զարգացման ուղին:

Հետագայում ես այլևս նման բան չլսեցի

նրանից: Միայն ավելի ուշ, տարիներ անց երբեմն սկսում էի մտածել այն մասին, թե ինչ էր ուզում ասել դրանով: Արդյո՞ք դա նշանակում է, որ այն ժամանակ արդեն նա կանխագուշակում էր, որ դեպքերի զարգացումը տանելու է խորհրդային անասան թվագրող պետության կործանմանն ու բազարային կապիտալիզմի հաղթարշավին: Այն ժամանակ ոչ ոք նման բան երևակայել չէր կարող: Սակայն մի՞թե պակաս պայծառատեսական էին աստղաֆիզիկայի բնագավառում նրա արած եզրակացությունները: Երիտասարդ աստղերի գոյության ապացույցն ու գալակտիկաների միջուկների ակտիվության վերաբերյալ հիմնադրույթները բավական էին, որ նրան համարեին ժամանակից շատ առաջ ընկած: Դեռ 60-ական թվականներին նա կանխատեսում էր, որ շուտով աստղագիտությունը կրկին որոշիչ դեր է կատարելու բնագիտության մեջ: Իսկ ի՞նչ է տեղի ունենում ներկայումս, ինչքան աստղաֆիզիկական նոր երևույթներ են հայտնաբերվել, որոնց շնորհիվ գիտության տարբեր բնագավառներում մեծ առաջընթաց է արձանագրվում:

Աստղադիտարանի աշխատակիցներից մեկին, որը երկար տարիներ պնդում էր, թե մեծ հայտնագործություն է կատարել և տասնյակ տարիներ որևէ գիտական արդյունք չէր տպագրում, համատեղ որոշումով ուղարկել էինք վաստակած հանգրստի: Որոշ ժամանակ անց Ուսուցիչը կանչեց ինձ իր աշխատասենյակ: Ասաց, որ այդ մարդն ուզում է զնալ Մոսկվայում իր ստացած արդյունքները պատմել:

- **Ճիշտ է, նա գնացել ու պատմել է մի քանի անգամ և ոչ մի դրական արձագանք չի եղել, բայց հիմա էլ շատ է ուզում զնալ**, - բացատրեց ինձ: - **Գուցե ժամանակավոր գործի ընդունենք ու մի տասն օրով գործուղենք...**

Ես բնականաբար կազմակերպեցի բոլոր անհրաժեշտ ձևականությունները:

Որոշ ժամանակ անց նորից նույն հարցը ծառայավ:

- **Մի անգամ էլ ուղարկենք**, - մի տեսակ մեղավոր տոնով ասաց Ուսուցիչը, չնայած որպես տնօրեն և պրեզիդենտ պարզապես կարող էր կարգադրել: - **Շատ է զալխո ու խնդրում: Ոչ մի կերպ չի պոկվում:**

Երբ ամիսներ անց նորից նույն հարցն էինք քննարկում, ասաց.

- **Ասում է, վերջին անգամ է ուզում զնալ...**

- Ես ամեն ինչ կանեմ, - ասացի: - Բայց հրամանում կնշեն, որ վերջին անգամ է նման բան արվում:

- **Այո, այո, դուք ճիշտ եք**, - անմիջապես պաշտպանեց նա: - **Եվ հրամանի մի օրինակ էլ տվեք իրեն, որ կարդա, թե ինչ է գրած:**

Ոչ ասելը բավականին դժվար գործ է մարդկանց մի տեսակի համար, որոնցից շատերն են ինչ-որ բան սպասում: Բոլորին օգնելու Ուսուցչի ներքին մղումը նրան ստիպում էր օգնել ոչ միայն նրանց, ովքեր իսկապես արժանի էին իրենց որևէ արժանիքով՝ գիտական, մարդկային կամ այլ: Այն ժամանակ էլ, հիմա էլ ես համոզված եմ, որ դրանից շատերն էին օգտվում, ովքեր զարտուղի ճանապարհներ գտնե-



լու արվեստին ավելի լավ էին տիրապետում: Հիմա, երբ այդ մարդկանցից որևէ մեկը հերթական անգամ ուրանում է Ուսուցչին, միշտ գտնվում է մեկը, որ հառաչում է.

- **Էհ, Վիկտոր Համազասպովիչ, տեսնեիր, թե այսինչն ինչ է անում այսօր...**

Իսկ նա, երևի, դեռ այն ժամանակ գիտեր նաև դա:

Սումգաիթյան եղեռնից հետո բավականին շատ փախստականներ եկան Բյուրական: Աստղադիտարանի աշխատակիցները, որոնց մեծ մասը փախստականների մասին լսել էր միայն ծնողներից կամ պապերից ու տատերից, աշխատում էր ամեն կերպ օգտակար լինել մահից մազապուրծ այդ մարդկանց: Կենտրոնական իշխանությունները փորձում էին չտեսնելու տալ ողբերգությունն ու հնարված իրականության խորտակումը: Նրանք նույնիսկ փորձում էին համոզել, որ այդ մարդիկ վերադառնալու իրենց տները՝ այնտեղ, որտեղ նրանց համար սպանդ էր կազմակերպվել:

Սկզբնական շրջանում նույն բանն էին փորձում կրկնել նաև տեղական իշխանությունները: Փախստական երեխաներին դպրոց չէին ընդունում, համարելով, որ նրանք շուտով վերադառնալու են իրենց տները: Այդ մասին տեղեկացավ Ուսուցիչը: Առանց ժամանակ կորցնելու զանգահարեց շրջկենտրոն:

- **Ինչպե՞ս կարելի է այդ մարդկանցից պահանջել վերադառնալ**, - իսկապես զայրացած ասաց նա: - **Ո՛ր գնան, որտեղ սպանել են իրենց հարևաններին ու հարազատներին: Իսկ երեխաները դպրոց պետք է գնան: Եթե այնպես է ստացվել, որ նրանք այլ տեղ չունեն գնալու, ի՞նչ է, երեխաները մնալու են առանց կրթության, ո՞վ իրավունք ունի այդ երեխաներից խլել սովորելու իրավունքը...**


Երեխաներին շատ արագ վերադարձրին կրթություն ստանալու նրանց իրավունքը:

Ղարաբաղյան շարժման հենց սկզբից հանրապետության կուսակցական առաջնորդները փորձում էին նրա վիթխարի հե-

ղինակությունն օգտագործել ցուցարարներին Ազատության հրապարակից տուն ուղարկելու համար, ինչպես 1965-ի ապրիլի 24-ին արել էին ժամանակի ղեկավարները: Նա ամեն կերպ խուսափում էր նման առաջարկներից: Հասկանալի էր, որ հոգով նա ցուցարարների կողմն էր, դարաբաղյան շարժումը համարում էր արդար ազգային ազատագրական պայքար: Հիշում էր, թե ինչպես էին վրդովված հայրն ու նրա ընկերները, երբ Ղարաբաղը մտցրել էին Ադրբեյջանի կազմի մեջ:

Երբ, այնուամենայնիվ, այլևս հնարավոր չէր պատրվակներ գտնել ու խուսափել մարդկանց առջև խոսելուց, նա ելույթ ունեցավ ցուցարարների առաջ: Երբ նա վերադարձավ Բյուրական և զրուցում էինք այդ ելույթի մասին, նա ասաց մի բան, որն այն ժամանակ թվաց չափազանց հոռետեսական:

- **Շատերին թվում է, թե Ղարաբաղի հարցն արդեն լուծված է, այն արդեն տրվել է Հայաստանին: Հավատացեք, որ այդ հարցը դեռ շատ երկար է ձգվելու, գուցե տասը տարի, գուցե**



տասնհինգ տարի կամ ավելի...

Դժվար էր հաշտվել նման կանխատեսման հետ, չնայած մինչև այդ բազմաթիվ առիթներ էին եղել նաև սեփական փորձով համոզվելու, որ նա երբեք հենց այնպես բառեր չէր շռայլում: Այդ պահից արդեն գրեթե երկու տասնամյակ է անցել, պատերազմ է եղել, հրադադար հաստատվել, միջազգային տարբեր հանձնաժողովներ են կազմվել, որոնք տարբեր առյուծաներում քննարկման առարկա են դարձրել խնդիրը, սակայն մինչև օրս հարցը վերջնական լուծում չի ստացել: Այն, ինչ ասում էր Ուսուցիչը տարիներ առաջ, արդեն հաստատվել է: Եվ մնում է համոզված սպասել, որ իրականությունն է դառնալու նաև մյուս ասածը.

- **Բայց վաղ թե ուշ Ղարաբաղի հարցը լուծվելու է հոգուտ մեզ: Ես չեմ հիշում այնպիսի դեպք, երբ ես պայքարեմ ինչ-որ բանի համար, որը վերջիվերջո չհաղթանակի:**

Անկախ այն բանից, որ փաստարկումը փոքր ինչ տարօրինակ էր հնչում, սակայն երբ այն դիտարկում ես նրա ապրած կյանքի և տարած հաղթանակների կոնտեքստում, սկսում ես հավատալ, որ ինչն էլ է այնպես, ինչպես նա էր պնդում:

Չափից դուրս հազվադեպ կարելի էր տեսնել նրան շատ բարկացած: Այն ամենը, ինչի համար շրջապատի մարդիկ կարող էին նյարդայնանալ, նա ընկալում էր շատ ավելի փիլիսոփայորեն, ինչպես վայել է կյանքի իմաստը մեկընդմիջտ հասկացած մարդուն: Իմ պատկերացմամբ այդ-

199

պես են կյանքի մանրութեան վերաբերվում հնդկական յոգերը:

- Երիտասարդ ժամանակ շատ տաքարյուն էի, - մի անգամ գրույցի ժամանակ ասաց նա: **- Հի կարող լռել, եթե ինչ-որ բան սխալ էի համարում:**

Նրան իսկապես բարկացած տեսել են, երբ Հայաստանում համատարած գործադուլներ էին կազմակերպվում և փակվում էին հանրապետության արդյունաբերական իսկաները: Նա չէր կարողանում որևէ բացատրություն գտնել նման մոտեցման համար: Մի անգամ, երբ մի սփյուռքահայ երիտասարդ այցելուի հետ մտամբ նրա մոտ և գրուցում էին իրադրությունից, նա հյուրին հարցրեց, թե ինչ կարծիք է վերջինս գործարանների փակման վերաբերյալ: Հեն հիշում, թե ինչ պատասխանեց այդ երիտասարդը, բայց նա երբեք չեմ մոռանա զայրույթի այն պոթկումը, որին ականատես եղա այդ պահին:

- Մի՞թե հասկանալի չէ, որ մեր նպատակին հասնելու համար ենք պետք է ավելի ուժեղ լինենք տնտեսապես, - գրեթե բղավեց նա: **- Իսկ մենք ամեն ինչ փակում ենք, ինքներս ենք խեղդում**

մեզ: Դե եկեք, փակենք, հետո տեսենք, թե մարդիկ ինչ են ուտելու, ինչ են հագնելու, ինչով են տաքանալու:

Այն ժամանակ արդեն պարզ էր, որ բարկության պոթկումն ամենևին կապված չէր հյուրի պատասխանի բովանդակության հետ: Դա ամիսների ընթացքում աստիճանաբար կուտակված անհանգստության արտահայտություն էր, որը պարզապես ելք էր փնտրում դուրս հորդելու:

Մի քանի ձմեռ աստղադիտարանի աշխատասենյակներում գրեթե ոչ ոք չէր լինում, քանի որ հնարավորություն չկար դրանք նույնիսկ փոքր-ինչ տաքացնելու համար նաև հնարավոր չէր աշխատակիցներին պարտադրել այդ սառնամանիքի ժամանակ նստել աշխատանքի տեղում: Յուրաքանչյուր ոք ինքն էր որոշում իր վերաբերմունքն իր հիմնարկի հանդեպ:

Այդ ժամանակ, երբ Ուսուցիչը գալիս էր շենք, մտնում իր աշխատասենյակ, որոշ ժամանակ նայում նոր գրականությունը, ապա անպայման գալիս էր իմ աշխատասենյակ: Գիտեր, որ ես գրեթե միշտ այնտեղ էի: Այն, որ նա է գալիս, հասկանալի էր արդեն յուրատեսակ քայլվածքից: Բացի դրանից, նա սովորաբար որոշ հեռավոր

րությունից հարցնում էր.

- Հայկն այստե՞ղ է...

Ո՞ւմ էր հարցնում, ինքն իրե՞ն, չգիտեմ: Սովորաբար ուրիշ ոչ ոք չէր լինում, որ մեկ ուրիշին հարցնեիր: Կամ գուցե այդ խոսքերն ինձ համար էին, որպեսզի այդ չեզոք հարցի միջոցով թույլ տար ինձ տեղեկանալ իր գալու մասին: Երբ ելնում էի, դիմավորում և ներս հրավիրում, միշտ հարցնում էր.

- Հիանալի՞նք:

Համոզված եմ, որ ինքն էլ հրաշալի գիտեր, որ մեզանից յուրաքանչյուրը երջանիկ էր նման խանգարումների համար: Այն, որ հնարավորություն էր առաջանում նաև գիտական հարցեր քննարկելու և իմանալու նրա կարծիքը, իսկապես գիտական երջանկություն էր, որն ավարտվեց Ուսուցչի մահվան հետ, և այն տեղը, որ յուրաքանչյուրին կյանքում զբաղեցնում էր նա, մնաց դատարկ: Նրա հետ կարելի էր գրուցել ամեն ինչի մասին և համոզված լինել, որ այդ գրույցից հետո ավելի վստահ ես զգալու ինքդ թեք ու պատրաստ անընդմեջ աշխատելու:

**Հայկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
աստղաֆիզիկոս**

ԵԿԱՎ, ԻՐ ԳԻՐԸ ԹՈՂԵՅ ՈՒ ԳՆԱՅ

Ասում են՝ ինչ էլ անես, չես կարող ճակատագրին դեմ գնալ. ճակատագիրը բախում է դուռը: Գնալով ճակատագիրը նրան Ռիմո գյուղում ծնված Սկրտիչ Սկրտչյանին, հետապնդել է ծնված օրից: 1941-ի ծնունդ է. չի տեսել Սաստուրի հորը: Զոհվածի զավակ. էսպես է ճանաչվել: Ո՞վ ունի աշխարհում. պիտի լսի Հասմիկ մորը, որ մարդ դառնա: Նրան մարդ են դարձնելու մոր խրատները, հայրական տունը, տունը զարդարող այգին: Ինչ էլ լինի, պիտի դժվար մեծանա Սկրտիչ տղան ականցը մորը ծայրին՝ գիրք կարդա, այգու ծառերի լեզուն հասկացիր, ջրի լեզուն հասկացիր, հասկացիր մեր տան դռնից երևացող սարերի՝ լեզուն:

Կարդաց, հասկացավ ու դարձավ... բանաստեղծ: Ենթան ու էնպիսի բանաստեղծ, որ համարձակվեց Չանթախի գյուղում հանդիպել Պարույր Սևակին, լսել նրա ծայրը, ամեն խորհուրդները: Առաջին իսկ գրքով պիտի ուշքի գար: Ուշքի էր եկել մորը տատիկ դարձնելով, բայց... Տիրան զավակը դեռ լեզու չէր առել մահացավ կինը: Երկու զավակին ինչպե՞ս մեծացրեց: Դժվարությամբ: Չանուսնացավ: Պահեց երեխաներին: Պահեց տունը: Պահեց այգին: Երևանից ամեն շաբաթ տուն գնաց, կարոտն առավ տան, մոր, զավակների: Երկուշաբթի՝ Երևան: Հրատարակչությունում խմբագիր է: Էսպես անցան տարիները, տասնամյակները:

Սկրտիչ Սկրտչյանը շուրջ 15 գիրք հրատարակեց: Նա բանաստեղծ էր, թարգմանիչ, արձակագիր: Դրամատիկական երկեր ստեղծեց: Բանաստեղծություն և... վեպ: Ազգային-ազատագրական շարժման ժամանակ Հայրենական պատերազմում զոհվածի զավակի մեջ արթնացավ զինվորը: Նա զինվորագրվեց ազատությանը, անկախությանը: Եվ մեր պատերազմից բերեց... ընտիր պատմվածքներ: Վերջին գիրքը՝ «Շուրջօրյա տոնավաճառ», լույս տեսավ... Գիրքը լույս տեսավ, հեղինակը՝ մահացավ: Տպագրության պատրաստ թողեց վեց գիրք, ձեռագրեր:

Վայոց Ձորի մարզպետարանը էս աշխարհի գրող զավակի հիշատակը հավերժացնելու համար եղեգնածորի երկրագիտական թանգարանում կազմակերպել էր գեղեցիկ միջոցառում: Մինչ այդ մարզպետարանի աշխատակիցները, Ռիմո գյուղի ուսուցիչները, աշակերտները, գրողի ընկերները՝ Համլետ Կարճիկյանը, Լիպարիտ Սարգսյանը, այցելեցին գյուղի գերեզմանատուն, ուր հանգչում է վաստակաշատ գրողի աճյունը: Եղեգնածոր գնալու ճանապարհին գրողները մտել էին Չանգակատուն՝ Պարույր Սևակի տուն-այգի, եղրևանու ծյուղեր էին պոկել (գուցեն) են ծառից, որ տնկել էր Սկրտիչ Սկրտչյանը. քիչ չէին

մրանք, ովքեր օգնում էին Պարույր Սևակին, երբ նա գյուղում ամայի սարավանդին, տուն էր կառուցում, այգի էր հիմնում: Հիմա այգին դրախտ է, հազար ափսոս, կիսատ մնացին բանաստեղծի երազանքները, ձեռագրերը:

Պարույրի տունն ու այգին սրբություն էր նաև Սկրտիչ Սկրտչյանի համար: Բանաստեղծի այգու եղրևանու ծառերից (այդ, ծառ) պոկած ճյուղերով, դաշտային ծաղիկներով աշակերտները զարդաեցին գրողի շիրմաքանդակը: Իսկ Եղեգնածորում՝ երկրագիտական թանգարանում, Սկրտիչ Սկրտչյանին նվիրված գրական-երաժշտական երեկոն այնքան հոգեկոծ էր, անկեղծ, առնչուն սիրով ու ջերմությամբ, որ թվում էր, թե... շրջանում չես: Եվ դա ոչ միայն շնորհիվ մարզպետարանի աշխատակցուհի, արվեստի, մշակույթի միջոցառող Սոնա Սարգսյանի, բեմի համար ծնված Ֆլորա Սարգսյանի, այլ բոլոր նրանց, ովքեր խոսք ունեին ասելու ամիսը, անտրտունը գրողի՝ Սկրտիչ Սկրտչյանի մասին: Որոշվեց ամեն տարի մայիսին շրջկենտրոնում անցկացնել պոեզիայի տոն:

Վայոց Ձորի մարզպետ, պարզապես մարզի մշակութային կյանքին շունչ հաղորդող Սամվել Սարգսյանի գոյությունը հուշում է, որ ամբողջ էլ մնա Սկրտիչ Սկրտչյանի աճյունը, ձեռագրերը չեն մնա անտիպ:

Գրողն սկսում է իր երկրորդ կյանքը:

Վահագն ՀՐԱՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄՐՑԱՇԱՐ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Հոկտեմբեր ամսին Սանկտ Պետերբուրգում մեկնարկելու է Հայկական ազգային-մշակութային ինքնավարության գավաթի սիրողական շախմատի առաջին բաց առաջնությունը՝ նվիրված Թուրինում շախմատի համաշխարհային օլիմպիադային Հայաստանի հավաքականի տարած հաղթանակին: Մրցաշարի կազմակերպիչը «Սանկտ Պետերբուրգի հայ հայրենակցական միություն» հասարակական կազմակերպությունն է: Այս նախագիծը իրագործվելու է Ռուսաստանի և Հայաստանի ժողովուրդների միջև բարեկամություն ու խաղաղություն բարոգելու նպատակով: Առաջնության մասնակից կարող են դառնալ բոլոր ցանկացողները:

ԱՐՄԵՆՊԵՏ

ՄԵՐ ՄԵԾ ԼԵԶՎԻ ՀԱՄԵՍՏ ՄՇԱԿԸ

«Ո՛վ հայ ժողովուրդ, եթե ուզում ես հայ դպրոցը փրկվի, երեխաների հետ պարապիր Վաչագան Սարգսյանի դասագրքերով»: Այսպես անակնկալ, սրամիտ ու պատկերավոր, չարենցյան պատգամ հիշեցնող կոչով բնորոշեց Հրաչյա Մաթևոսյանը «9-րդ հրաշալիք» շաբաթաթերթի հիմնադիր և գլխավոր խմբագիր, «Լեզվագետ» կենտրոնի տնօրեն, մեկ տասնյակից ավելի գիտական, գիտագեղարվեստական, թարգմանական գրքերի, հայերենին նվիրված երկու տասնյակ գրքերի, ձեռնարկների, դասագրքերի հեղինակ Վաչագան Սարգսյանի վաստակը հավելելով. «Նա պարզապես ֆիդայի է իր գործի մեջ...»: Զուր չեն կատակում, թե Վաչագանն ամեն լուսաբաց մի նոր գրքով է դիմավորում:

Վերջերս լույս է տեսել «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», որն ընդգրկում է 1956-ից մինչև 2006-ը Հայերենի բարձրագույն խորհրդի և տերմինաբանական կոմիտեի որոշումները հայերենի ուղղագրության, ուղղախոսության և տերմինաբանության վերաբերյալ: Ամփոփ այս ժողովածուն, որ կազմել է դոկտոր պրոֆեսոր Հովհաննես Բարսեղյանը, հրատարակել է «9-րդ հրաշալիք» շաբաթաթերթը:

- Պարոն Սարգսյան, դուք՝ որպես այս «Տեղեկատուի» բազմաթիվ նախագծերի հեղինակ, ինչպե՞ս եք գնահատում այդ գրքի լույսընծայումը:

- Մշակութային լուրջ իրադարձություն է: Քսան տարի լույս չէր տեսնում: Շատ չարավեցիք (հատկապես ուզում եմ շեշտել խմբագիր Հրանտ Վարդանյանի տրեմաջան աշխատանքը) և միասնական ջանքերով կարողացանք գիրքը լույս ընծայել: Ժողովածուի լույսընծայմանը նպաստեցին կրթության նախարարությունը և Կըրթության ազգային ինստիտուտը: «Տեղեկատուի» մեջ տեղ են գտել հայերենը կանոնարկող որոշումները: Ժողովածուն անհրաժեշտ է բոլոր խմբագրություններին, բոլոր թարգմանիչներին, բոլոր ընդունվողներին, հայերենով հետաքրքրվողներին: Այսինքն՝ սա պետականորեն հաստատված փաստաթուղթ է, բազմազան օրենքներով ամփոփված մի գրքի մեջ, հիմնալի խմբագրված և սրբագրված: Նշեն միայն, որ «Տեղեկատուում» գետեղված այն նոր որոշումները, որոնք տեղ չեն գտել դասագրքերում (գործիքների՝ հատուկ բաղադրյալ անունների մասին որոշումը), չեն կարող հիմք դառնալ բուհական ընդունելության քննությունների ժամանակ:



- Զեր «Այբբենարանը» 1998-ից ցայսօր գործածվում է հանրապետության և արտերկրի դպրոցներում: 2005-ին լույս տեսավ ձեր «Հայերենի դասագիրքը» դարձյալ առաջին դասարանի համար, որը հաջորդությամբ փորձարկվելով հանրապետության մի շարք դպրոցներում՝ 2006-ին որպես հիմնական դասագիրք մուտք գործեց դպրոց:

- Դասագրքի փորձարկումից հետո թե՛ երեխաները, թե՛ ծնողները, թե՛ ուսուցիչները սիրեցին դասագիրքը: Բոլորը համաձայնեցին, որ ստեղծվել է մի դասագիրք, որը համապատասխանում է ժամանակակից պահանջներին: Խորհրդային դասագրքերում խաղը, որպես ուսուցման մեթոդ, համարվում էր սխալ: Մինչդեռ աշխարհում ընդունված է, որ խաղը ուսուցումը զվարթ դարձնելու գլխավոր ձևերից մեկն է: Եթե երեխան ինչ-որ բան սովորում է հուզական ընկալմամբ, եթե գիտելիքը նրա հոգու և սրտի միջով է անցնում, նա երբեք չի մոռանում: Ես հասա նրան, որ խաղը մտցրի դասագիրք: Եթե երեխան սիրի գիրքը, համակարգչից, հեռուստացույցից կկտրվի: Երեխային այդպիսով կվերադարձնենք դեպի գիրքը, ինչն արդեն մեծ բան է:

- Պարոն Սարգսյան, մայրենի լեզվի հանդեպ ձեր սիրո յուրօրինակ արտահայտությունն է նաև «Հայերենը ափի մեջ» գիրքը:

- Այս գրքում բացառապես հայոց բառերի ստուգաբանություններն են՝ ըստ Հր. Սեմառյանի, Մ. Աբեղյանի, Գ. Ղափանցյանի, Գ. Ջախոնկյանի, Էդ. Աղայանի: Այդ ստուգաբանությունները ես վերածել եմ հետաքրքրաշարժ գրույցների՝ նպատակ ունենալով գիրքը հանրամատչելի դարձնել: Այս գրքի գրավչություններից մեկն էլ այն է, որ պարունակում է հայերենին վերաբերող 300-ից ավելի ասույթներ, որոնցից 70-ը՝ օտարազգի նշանավոր մարդկանց: Հայ իրականության մեջ այս ծավալով ու

այսպիսի մեկտեղմամբ դրանք երբեք չեն տպագրվել. ասույթները պեղել եմ զանազան գրքերից, հանդեսներից, հարցազրույցներից, բանավոր խոսքից, մեծերի նամակներից, գեղարվեստական երկերից, արխիվներից:

- «9-րդ հրաշալիք» և «Արարման 9-րդ օրը» նոր ժողովածուն. ի՞նչ խորհուրդ ունի ձեզ համար 9 թիվը:

- Ավելի լավ է պատմեն գրքի գրույցներից մեկը, թե ինչ է եղել արարման 9-րդ օրը: Աստված 6 օրում ստեղծեց աշխարհը, 7-րդ օրը հանգստացավ, 8-րդ օրը ի մի բերեց արածը, իսկ 9-րդ օրը Արարիչը երկար մտածեց, թե ինչ ստեղծի, որ նախապես չիմանա ի՞նչ է լինելու դրա հետագա ճակատագիրը: Երկար խորհելուց հետո Արարիչն արարեց հային, որն անկանխատեսելի է: «Արարման 9-րդ օրը» գրքում տեղ են գտել վերջին տարիներին գրածս հրապարակախոսական հոդվածները, բանաստեղծությունները, երգիծական և մանկական ստեղծագործությունները, ասույթներ:

- Ապագայի ի՞նչ նախագծեր ունեք:

- Վեց տարի է, ինչ «9-րդ հրաշալիքի» էջերում տեղ է գտել «Հայկական ասույթներ» խորագիրը: Հավաքվել է ավելի քան 3000 ասույթ, որոնք մեզ են ուղարկում ընթերցողները: Այս տարի հույս ունեմ լույս ընծայել «Հայկական ասույթների հանրագիտարանի» առաջին հատորը: Մյուս նախագիծը հայկական ժողովրդական հեքիաթներն են: Մեկ տարուց ավելի է, ինչ «9-րդ հրաշալիքում» նաև հեքիաթներ են տպագրում: Մենք ունենք 15-հատորանոց հայկական հեքիաթների շտեմարան, որը, ցավոք սրտի, մնում է որպես անհայտ մի գանձ, քանի որ ժողովուրդը դժվարությամբ է հասկանում մեր տարբեր բարբառներով գրառված հեքիաթները: Թարգմանել եմ դրանց մեծ մասը, որոնք կընդգրկվեն «Հայ ժողովրդի հեքիաթներ» ժողովածուում: Ընտրողաբար եմ թարգմանում, դարձնում գրական հայերեն՝ պահելով ոճը, միջավայրը:

Մեր շաբաթաթերթի ուղղվածությունը զուտ մշակութային է, պատմամշակութային: Թերթը գրավիչ դարձնելու համար օգտագործում ենք հայկական խաչբառ, զանազան լեզվատրամաբանական խնդուկներ, խնդիրներ, գլուխկոտրուկներ: «9-րդ հրաշալիքը» արդեն 12 տարի է, ինչ գլխավորում է հետաքրքրաշարժ թերթերի շքերթը: Մենք կանք, որովհետև սիրում ենք մեր ընթերցողին, և ընթերցողը սիրում է մեզ:

Հարցազրույց՝ Սահականուշ ՍԱՀԱԿՅԱՆԻ



Կենտրոնական բանկը շրջանառության մեջ է դրել հայ անվանի երաժշտագետ Կոմիտասին (Սողոմոն Սողոմոնյան) նվիր-

ՆՈՐ ՀՈՒՇԱԴՐԱՄ

ված ոսկե հուշադրան: Հուշադրամի դիմերեսի դաշտում պատկերված են ժամանակակից և հին նոտաները՝ խազերը, որոնց ուսումնասիրությամբ զբաղվել է Կոմիտասը: Պատկերներից մեկը երկու տողով անվանական արժեքի մակագրու-

թյունն է՝ «10000» և «ԴՐԱՄ»: Ամբողջը եզերված է գծավոր շրջանագծի մեջ, որի եզրաշուրջի միջև հայերեն մակագրված է՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ 2006»:

Մեզ հետ, մեր կողքին

Հոգու նվիրումով

Ժամանակն իր շառավղից դուրս չի սայթաքի և իր հունով կընթանա, քանի դեռ մեզանում կան, ու հավատացած ենք, կլինեն բարու սերմնացանները

Բնությունն ի սկզբանե տղամարդուն և կնոջը տարբեր է ստեղծել, նրանց աշխարհի բերել յուրօրինակ դերաբաշխմամբ:

Ըստ այդմ էլ, յուրաքանչյուրը, իր ապրած միջավայրին համահունչ, իր բնական կոչումն է իրականացնում:

Հայ կին-անհատի մասին իմ (հավատացած եմ ոչ միայն իմ) միջավայրում եղած խոսակցությունների ուղին էլ ինձ տարավ Վանաձորի առաջին հիվանդանոցային համալիրի փստորոշիչ լաբորատորիան:

Ե և այն փաստը, որ իրենց սիրելի ընտրյալը՝ հայ կինը, վերջնականապես ցանկանում է ամբողջական դարձնել իր կերպարը՝ որպես կարող ուժ, որպես քաղաքական պայքարում հասունացած մարդ:

Իսկ ժողովրդի ընտրյալի կայացումը սկսվում է այն ժամանակ, երբ նա կարևորում է հասարակության մեջ իբրև ստեղծագործ-անհատ կայանալու անհրաժեշտությունը:

- Ի՞նչն է ստիպում կայացած բժշկուհուն



Նա, ուն պետք է տեսնել, կենտրոնի վարիչ, բժշկուհի Այծենիկ Օհանյանն էր:

Յուրաքանչյուր վանաձորցի հպարտանում է, որ իր քաղաքում, իր կողքին ապրում է նրա պես մարդ, հպարտանում է, քանզի նրա քրիստոնեական և իր ժողովրդին անշահախնդիր նվիրումը գնահատվում է ըստ արժանվույն, ու նրա ջանքերի արդյունքը դառնում է մնայուն ներդրում մեր քաղաքի շարունակվող պատմության մեջ:

Յուրաքանչյուր վանաձորցի ողջունում

կայանալ նաև որպես համայնքի ավագանի: Կնոջ՝ կարիերայի ձգտումը ծի՞շտ է համարում. «Հայաստանում կանայք բարձր մտավոր և մասնագիտական ներուժ ունեն, որն անտեսել հնարավոր չէ, ինչպես որ ամբողջությամբ է նրանց չընդգրկել հասարակական ու տնտեսական կյանքի ոլորտներում:

Կանայք աճող արագությամբ ու ակտիվությամբ են գործում հասարակական կազմակերպություններում և առհասարակ, կյանքում նրանք իրենք են հաղթա-



հարում խոչընդոտները՝ ցուցաբերելով գործարարության անհրաժեշտ գիտելիքներ, ձգտում և խելամտություն: Սա առաջին:

Եվ երկրորդ՝ կինը յուրահատուկ նրբություն է մտցնում գործի մեջ, պատճառը մայր լինելն է: Դա չի նշանակում, իհարկե, որ ամեն կին պետք է ձգտի դրան: Կա կնոջ մի տեսակ, որն իրեն երջանիկ է զգում իր տանը, և մայրությունն է իր աշխարհը, և դա շատ գեղեցիկ է: Բայց կա նաև կնոջ մյուս տեսակը, որ առանց աշխատանքի չի կարող իրեն երջանիկ և լիարժեք զգալ լինելով միայն տան կին և մայր»:

Համաքաղաքացիներից շատերին զարմացնում է նրա մարդկային, բարոյական նկարագիրը, ժողովրդին նվիրվելու նրա կարողությունն ու կամեցող-պատրաստակամությունը: Բայց առաջին իսկ շփումից ու նրա հետ առաջին զրույցից պարզվում է, որ նրա բարոյությունը, մարդասիրությունը ձև ու չափ, կշիռ ու ծավալ չունի: Դա Այծենիկ Օհանյանի հոգու պոթելումն է իր նմանին իր կարողությամբ նվիրվելու յուրահատուկ և հազվագյուտ բնավորությամբ:

Երևի թե դրանով է առաջնորդվում նա, քանզի ազգի և հայրենիքի հարատևության, համամարդկային համընթաց ազգային արժեքների պահպանման ու ներդաշնակ զարգացման ջատագովն է:

Համաքաղաքացիներից շատերի մոտ էլ թյուր կարծիք կա, թե այդ ինչպես է, որ տարիներ շարունակ անփոփոխ ու անփոխարինելի է, չլինի՞ թե «ազդեցիկ մարդ» ունի: «Ազդեցիկ» մա՞րդ: Իհարկե ունի:


Անունն անբասիր Աշխատանքն է...

Մեծ է մարդկանց ընդունելության հոսքը կենտրոնում: Բազմազան են մարդիկ, տարբեր են օրվա մտածումները, անգամ ինքնատրամադրվածությունը, բայց սիրելի բժշկուհին մշտապես լրացնում է օրվա իր մտապատկերները. կարողանում է անդավաճան մնալ մարդկային, մասնագիտական սկզբունքներին, ու ամեն անգամ, անկախ ամեն ինչից, հոգնած է, թե ծանրաբեռնված, կենտրոն է մտնում այն հաճելի գիտակցումով, որ պիտի օգնի մարդկանց:

Լևոն ԽԱՉԱՏՐՅԱՆ
Վանաձոր-Կալուգա

Հայրնաբերել են Մատթեոս առաքյալի գերեզմանը

Դրոլդ հնագետները վստահ են, որ Իսիկ Կուլ լճի ափին գտնվող հայկական վանքում հայտնաբերել են Մատթեոս առաքյալի գերեզմանը: Հնագետ Վ. Պլոսկիխի գլխավորած հնագիտական արշավախումբը լճի հյուսիս-արևելյան ափին հայտնաբերել է հայկական վանք, որտեղ, համաձայն 14-րդ դարի քարտեզի, թաղված է Մատթեոս առաքյալը: Ըստ ավանդության՝ նա այդ տեղանքում ստեղծել է մի քանի քրիստոնեական համայնք, իսկ Վենետիկում պահպանվող փաստաթղթի համաձայն՝ առաքյալը թաղված է Իսիկ Կուլ անվանումով վայրում գտնվող հայկական մի վանքում:



ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՆԵԼՈՎ ՄՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Արվեստի՞ երևույթ է գորգը, թե՞ արհեստի: Նրա վրա դրված են սոսկ կիրառական և դեկորատիվ նպատակներ, թե ավելի նշանակալից դեր է վերապահված մշակույթի վերնաշենքում: Ի՞նչ բառով անվանել միայն արևելյան ժողովուրդներին բնորոշ այդ զբաղմունքը՝ գորգագործություն, թե՞ գորգարվեստ:

Դեռևս 8-րդ դարի սկզբին արաբական խալիֆության անդամ, մատենագիր Իբնֆարուլիի, 13-րդ դարում վենետիկցի ճանապարհորդ Մարկո Պոլոյի թողած տեղեկությունները, և վերջապես 15-րդ դարում եվրոպական նկարիչների կտավներում տեղ գտած հայկական գորգանունները վկայում են հայկական բարձրարժեք



սահման երևակայության ուղիներ է բացել, որի բարձրագույն գագաթը գեղեցիկն է և նրա առաջ խոնարհվելու, այն ինչ-որ կերպ վերաստեղծելու կարողությունը:

Այսպիսի իրողություններն են, որ հայկական գորգի յուրաքանչյուր նմուշ դարձնում են արվեստի խորապես անհատականացած ստեղծագործություն, դնելով գորգի՝ որպես հնագույն մի արվեստի վերարժեքավորման, մեզ հասած բոլոր նմուշների պահպանման հապաղում հանդուրժող հարցը:

Լևոն ԽԱՉԱՏՐՅԱՆ



գորգարվեստի փաստը:

Գեղագիտության Ազգային կենտրոնի Վանաձորի մասնաճյուղում գորգարվեստը ազգային, ավանդապահական մանրնթացքի անընդհատության նպատակ

ունի, և նրա իսկական շարունակման համար այսօր կենտրոնի տնօրեն Կարինե Գլյանը իր գորգագործ-գործընկերներին առաջարկում է ոչ թե ինքնահնար, թեկուզ ավանդական գծագրեր, այլև ձգտում է այստեղ ծնվող ամեն մի գորգում վերականգնողական տեսնել ստեղծագործական այն ըմբացը, մտածողության դիմամիկան, որ ընկած է դրա հիմքում: Այն է՝ զարդամոտիվներով արտահայտել ժողովրդական հնագույն պատկերացումները, զարդերի լեզվով պատմել հայկական արվեստին բնորոշ ներդաշնակ գունային անցումները, բազմապիսի պատկերումներով հավաստել կյանքի, արգասաբերության գաղափարը:

Մայր ու դուստր Աշխեն և Նունե Ղազանչյանները, Անահիտ Մարտիրոսյանն իրենց «ես»-ը ինչ-որ տեղ զոհաբերելով զարդանկարի փոխանցման պարտադիր պրոցեսում, միաժամանակ դրան գունարում են իրենց հարյուրավոր գործընկերների հավաքական անհատականությունը՝ աշխատելով ստեղծել գորգարվեստի ավելի բարձր, միաձուլյա որակներ, պահպանելով ազգային գորգարվեստի դեմքը փութանցիկ փոփոխություններից:

Նախընտրած գործը նրանց համար ան-



Նկարները՝ Էմիլ ՅԱՎՐՅԱՆԻ

1. կատարված աշխատանքներից
- 2, 3, 4. գորգագործները տորքի մոտ

«Մարդ, ով դուդուկի հետ «դու»-ով խոսեց, դուդուկն էլ իր հետ»

կամ
Վարպետ Արոն


Ամեն մի արվեստ մի զարմանահրաշ աշխարհ է: Ամեն մի արվեստագետ էլ նրանում միշտ ձգտել է ստեղծել իր սեփականը, իր հեքիաթը:

Ինքնուրույնությունն արվեստագետի անհատականությունն է, նրա դեմքը, և չկա արվեստագետ առանց անհատականության: Բնությունն էլ նրան շնորհել էր վառ անհատականությամբ, և նա վաղ հասակից հավասարապես տիրապետում էր հայկական մի շարք նվագարանների:

Ի դեմս Արտավազդ Տեր-Յովհաննեսյանի՝ մենք էլ ունեինք փայլուն, ինքնատիպ երաժիշտ-դուդուկահար, ում թավշյա մեղեդայնությամբ կատարումները գեղագիտական բավականություն էին պատճառում հազարավոր մարդկանց:

Արտավազդը, կամ ինչպես համաքաղաքացիներն էին կոչում Ատոն Յայաստանում ու նրա սահմաններից դուրս երաժշտական տարբեր փառատոների ու մրցանակաբաշխությունների դափնիները կրելուց մինչև ժողովրդի կողմից Վարպետի համարում ստանալը ինքնաճանաչման երկար, ինքն իրեն աշխարհին ծանոթացնելու դժվարին ճանապարհ է անցել: Նվագել է լավագույն երաժիշտների հետ, կատարել ճանաչված երգահանների ստեղծագործություններ, հրավերներ է ստացել եվրոպական լավագույն երաժիշտ-կատարողներից և փառատոների կազմակերպիչներից:

Յայրենիքը ծնում է իր անհատականությամբ օժտվածներ-



ին, և այդ անհատականություններն են ճանաչում բերում իրենց հայրենիքին՝ աշխարհի մշակութային քարտեզին ամրագրելով նրա անունը: Ատոն ի գորու էր այնտեղ վառ պահել Լոռվա ու Վանաձորի անունները:

Իսկական արվեստագետի հայտնությունը որևէ ժողովրդի կյանքում ուղղակի հրաշք է ու երջանկություն: Եթե արվեստագետն էլ դառնում է իր ժողովրդի մշակութային տարեգիրներից մեկը, եթե նա իր արվեստը ծուլում է ժողովրդի հոգևոր հարստությանը, և իր անձով, նկարագրով ու իր արվեստով դառնում է երկրի ու ծննդավայրի ելքյան անբաժանելի մասը, ապա այդ ժամանակ կարելի է ասել, որ նա սխրանք է գործել:

Ատոնի արվեստը չմնաց սահման-կադապարի մեջ: Այն տարածվեց, դուրս եկավ իր ափերից, դարձավ հանրաճանաչ: Նրա արվեստի հաճույքը բախեց շատ ազգերի սրտեր, ներս մտավ տիրոջ իրավունքով ու դարձավ հարազատ: Նրան հայահունչ

վարպետ կոչեցին Կրեմլի սյունագարդ դահլիճում, Ֆրանսիայի, Գերմանիայի, Լեհաստանի բեմերում զարմանալով, թե ինչպես է Վարպետը դուդուկի մեջ քանում իր հոգին, բայց և նշում, որ Արտավազդ Տեր-Յովհաննեսյանի հնչյունային տարածքը ժամանակի անորսալի օրգանական բաբախունի մեջ ընդգրկելու բացառիկ ունակություն ունի...

Անշուշտ դժվար էր և հասկանալ սեփական ձեռագիր ունեցող արվեստագետի մտածողությունը իր արվեստի գաղտնիքներն ուրիշներին փոխանցելու գործում:

Դժվար էր հասկանալ, որովհետև ամեն մի անհատականություն ինքն իրենից է ցանկանում սկսվել և վերջանալ իրենով՝ իր ստեղծագործական գաղտնիքն իր հետ տանելով: Ատոն այդպես չէր մտածում:

Տարօրինակ է մարդ արարածը: Մեծերի կորստից հետո է հանկարծ հասկանում, որ ինչոր բան այնպես չի ասվել նրան, երբ ապրում էր, չի մեծարել այնպես, որ հիմա նրա հոգին խաղաղ լինի, որովհետև ճակատագրական պահից հետո, այսինքն այսօր, այլևս ուշ է փռել նրա վրա մեր ուշադրության զգեստը:

Միայն կարելի է փաստել, որ դուդուկը Արտավազդ Տեր-Յովհաննեսյանի կյանքի ծայրն էր, նրա անցած ճանապարհի իմաստավորումը:

Լևոն ԽԱՉԱՏՐՅԱՆ
Վանաձոր-Կալուգա

ԼԱՏՎԻԱՅՈՒՄԿԱՆԳՆԵՑՎԱԾ ՀԻՍՈՒՄԻ ԱՐՁԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԸ ՀՐԱՅՐ ԱՎԵՏՅԱՆՆԷ



Լատվիայի Ագլոն քաղաքում վերջերս կանգնեցվել է Հիսուս Քրիստոսի մի քանի մետրանոց արձանը: Արձանագործը մեր հայրենակից Հրայր Ավետյանն է, որ Լատվիայի գեղարվեստի ակադեմիայի շրջանավարտ է: Ուկրաինական գրանիտից կերտված հսկա քանդակի վրա Հրայրն աշխատել է վեց տարի:

Նորակերտ արձանն ըստ արժանվույն կգարդարի ամենամյա հանդիսությունները,

որոնք Ագլոն քաղաքում օգոստոսի 12-15-ն անցկացվում են ի պատիվ Մարիամ Աստվածածնի համբարձման (վերափոխման) կաթոլիկական տոնի: Ըստ ավանդույթի, այդ օրերին հազարավոր հավատացյալներ այստեղ են գալիս աշխարհի տարբեր կողմերից: Այս տարի ուխտավորների թիվն ամենում է 10 հազարից:

Պ. Բ.

Կյանքի գործիք՝ գուռնա

Հոլիվուդյան «Գլադիատոր» ֆիլմը շրջադարձային էր հայ ժողովրդի համար: Այդ ֆիլմը, թերևս, աշխարհում դուրսի երաժշտության տարածման ամենամեծ խողովակը դարձավ: Ու մենք մինչև հիմա, թերևս, չենք էլ մտածել այն մասին, թե օտար մարդիկ ինչպե՞ս են հասկացել և ընկալել այդ երաժշտությունը: Բայց վերջերս նման հնարավորություն կարծես թե ստեղծվում է, քանի որ զանազան օտարերկրյա ռեժիսորներ իրենց ֆիլմերում օգտագործում են դուրսի երաժշտությունը, ինչը առաջին հայացքից ուրախալի իրադարձություն է: Բայց այստեղ կա մի բայց. կարծես թե դուրսի երաժշտությունը ռեժիսորները հարմար են համարում միայն մահվան տեսարաններում: Ընդ որում, այս մոտեցումը սկսել է նկատվել նաև սերիալներում: Վերջերս պատահաբար բնկած մի տեսարան ուղղակի սպանիչ էր. անհայտ անձինք ավտոմեքենայից գնդակահարում են ինչ-որ մեկին: Առաջին կրակոցներին զուգահեռ մտնում է դուրսի երաժշտությունը: Բնարական հերոսի դիակն ընկած է փողոցում: Կադրում դատարկ փողոց է, մի սիֆոնակ կաստում-շվարկով տղայի՝ բերանք-սիվայր ընկած դիակ, ու նվագում է դուրսի երաժշտությունը: Բայց ժամանակ, երբ թվում էր, թե մենք աշխարհին ինչ-որ բարձր բան ենք ներկայացրել, պարզվեց, որ անկանխատեսելի ոչինչ տեղի չի ունեցել, մենք նորից աշխարհին ներկայացել ենք զոհի կերպարով ու կարգավիճակով, այդպիսին լինելու մեր հատուկ ընդունակությամբ, զուցե նաև՝ ձգտմամբ: Ու հիմքեր կան մտածելու, որ հենց այսպիսին է աշխարհի ընկալումը դուրսի երաժշտության վերաբերյալ: Եվ իսկապես. ի՞նչ կարելի է անել դուրսի երաժշտության ներքո. առաջին հերթին լացել, ու բոլորս գիտենք, որ մարդկությունը ավելի ուժեղ լացացնող գործիք չի

հնարել, քան է դուրսի երաժշտությունը: Ընդ որում, շատ կարևոր է, որ դուրսի երաժշտությունը էլ շատ ավելի վաղ, քան հայ ժողովուրդը ահարկու կոտորածների տակ է ընկել: Ասել կուզի, հնարավոր է, որ դուրսի երաժշտությունը միայն հետևանք է, այլևս պատճառ, լացելու, խեղճ, անօգնական լինելու հիմնավորում: Զե, ինչ խոսք, դուրսի երաժշտության տակ կարելի է նաև պարել, բայց մի տեսակ ծածուկ, թաքուն, որպեսզի շատ աղմուկ չլինի: Ու եթե մի տեղ դուրսի երաժշտության տակ պարում ես, կարող ես համոզված լինել, որ այդ երաժշտության ծայրը շատ հեռու չի հասնի, այսինքն՝ հանգիստ խղճով կարող ես պարել: Հանգիստ խղճով, բայց ոչ՝ լիաթոք, որովհետև եթե մի քիչ ակտիվ պարես, երաժշտությունը այնքա չես լսի. մարմնիդ շարժումները ծայրը կխալացնի այն: Այնպես որ, դուրսի երաժշտությունը շատ ավելի հարմար է լացելու, մեռնելու, անօգնական լինելու համար: Եվ մենք, որ այդքան շատ ենք սիրում դուրսի երաժշտությունը, բնականորեն պետք է ավելի ու ավելի անտարբեր լինե՞նք գուռնայի նկատմամբ, գործիք, որի ծայրը կհասնի սարից սար ու քնած թշնամուն կարթնացնի, ու նա կգա մեզ վրա ու կկոտորի մեզ: Այս պատճառով մենք գուռնան պաշտելու սովորություն չունենք: Բայց եթե արդար լինենք, սա կյանքի գործիք է, գործիք, որի մեջ ազատություն կա, ըմբոստություն, թռիչք, ոգի, ուժ, դիմագիծ, ողնաշար: Եվ ուզում եմ, շատ եմ ուզում, որ գուռնան իրապես մտնի մեր կյանք և խորը արմատներ գցի մեր կենցաղում: Սա կնշանակի, որ մենք հասել ենք ինքնաճանաչման և սկսել ենք սիրել կյանքը այն աստիճան, որ կկրծենք դրա դեմ դուրս եկած ցանկացածի կոկորդը:

Նիկոլ ՓԱՇԱՅԱՆ

ԱՍԵՂԻ ՎԱՅԵԼԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՉ ՄԻԱՅՆ...

«Քավ լիցի, որ քո խաչից բացի ուրիշ պարծենալու բան ունենամ»: «Ինձ օգտագործիր որպես քեզ անհրաժեշտ անոթ»։ Պողոս առաքյալի այս խոսքերն են ասեղնագործող Անահիտ Կարապետյանի ապրելու և գործելու նշանաբանը։



Սեր, համբերություն, խոնարհություն. այս երեքի միաձուլմամբ է ստեղծում ու հասցնում կատարելության յուրաքանչյուր ասեղնագործ մշեցու իր արձանագործական պարտ Անահիտ Կարապետյանը։

«Սեր արվեստը կորսված չէ, ուղղակի մեջք է», - համոզված է նա։ Անահիտ Կարապետյանը կարևորում է ազգային մշակույթի տարածումը ու այն երիտասարդներին փոխանցելու և հենց այս նպատակով էլ ստեղծել է «Սուրբ Շուշանիկ» ասեղնագործության խմբակը՝ իր ամենասիրելի սրբուհու անվամբ։ Այս բացառիկ շնորհքը նրան է փոխանցվել ժառանգաբար։ Սակայն ճակատագիրը նույնպես իր դերն է խաղացել։ Անահիտը ավարտել է Պոլիտեխնիկական ինստիտուտի կիրճեմենտիկայի ֆակուլտետը, բայց այնքան էլ չի սիրում իր մասնագիտությունը։ Սիրած գործով զբաղվելու՝ Բարձրյալին ուղղված աղերսը տեղ հասավ։ Սկսեց ասեղնագործել աշխարհիկ, այնուհետև հոգևոր թեմաներով։ Մեծ ներշնչանքով ստեղծված յուրաքանչյուր աշխատանք ուղեկցվում է Գ. Նարեկացու, Ն. Շնորհալու տաղերով ու սաղմոսներով։ Անահիտ Կարապետյանը հիմնականում ստեղծում է հոգևոր դասի հազուստը՝ նպատակ ունենալով վերականգնել քահանայացի դասի կանոնիկ զգեստները, որոնք արդեն մի քանի դար բացակայում

են։ Ունի նաև նորարարություն՝ մանկական կնուների շապիկներ, պայուսակներ, մաշիկներ, հարսանեկան բացիկներ։ Նա կարծում է, որ պատասխանատվությունը հոգևոր արժեք է, որը եթե չունեցար արածդ աշխատանքի նկատմամբ, այն արժեք չի ունենա, նաև ավելացնում է. «Պատարագիչ քահանայի զգեստների ողջ պատասխանատվությունը կրում է ասեղնագործողն ինքը»։ Ի դեպ, նրա աշխատանքներից կան նաև Հայաստանից դուրս։ Անահիտն է ասեղնագործել Երուսաղեմի Սուրբ Զակարե եկեղեցու Զակարոս առաքյալի մատուռի վարագույրը։

Մասնակցել է բազում մրցույթների, բայց հիշարժան է մեկ տարի առաջ ԱՄՆ-ի Սանտա Ֆե քաղաքի ազգային արվեստների թանգարանում կազմակերպված փառատոնը, որին հրավիրել էր տիկին Դոննա Էվանսը։ Ի դեպ, Անահիտ Կարապետյանը Հայաստանը ներկայացնող երեք արվեստագետներից մեկն էր, որ արժանվում էր հանդես եկավ՝ ներկայացնելով սիմոնցներ, մանկական կնուների շապիկներ, իր տեսակի մեջ միակ՝ հրեշտակներով եկեղեցական պայուսակներ։ Նշենք, որ այս նախաձեռնությունը պատկանում էր ՅՈՒՆԵՍԿՕ-ին։ Հենց այս քաղաքում էր, որ հայտնաբերեց հայկական՝ Մարաշի սիմոնցը՝ ներկայացված որպես ութբեկական։ Իսկ պատկերասրահի տարակուսած տնօրենը անտեղյակ էր, ավելին՝ պատկերացում անգամ չունեց Հայաստանի մա-

սին։ Բայց... լավատես է Անահիտը. «Այս հողը իմաստավորված է, ոչինչ հենց էնպես չի կատարվում։ Գողանալը, տանելը ժամանակավոր է։ Մի օր ամեն ինչ կվերադառնա իր տեղը»։

Մարիամ ՄԻՐՁՈՅԱՆ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ



Լույս է տեսել Սերգեյ Գալյանի «Հրամայված է սպանել» գիրքը, որտեղ քննված են Պարույր Սևակի, Մինաս Ավետիսյանի և Վարդգես Պետրոսյանի սպանության հանգամանքները, ներկայացված են նոր փաստեր։ Հիշեցնենք, որ Սերգեյ Գալյանը հեղինակ է քրեական հանցագործությունների և քրեական աշխարհի մասին գրքերի ուշագրավ շարքի։

ХАЧИК НА ШЕЕ

Склонение армянского имени по падежам русской жизни

Земля расплзается вширь, уверяют ученые, у нее появилось пузо, и глобус теперь должен быть вовсе не шарообразной формы, а несколько приплюснутый, ближе по форме к тыкве. Насчет тыквы не скажу, что же касается шестой части суши, то она для лиц определенной национальности стала принимать очертания сплошных углов. Не круг, не тыква, но многоугольник — фигура с множеством острых и обидных углов. Ставят туда лицом к стенке неудобных людей и неудобные народы. Забава такая, освященная традицией...

Именительный: кто? что? — ХАЧИК

В прямом переводе с армянского Хачик означает «крестик». Не детские крестики-нолики, а висящий на шее символ веры. В развернутом виде оно звучит как Хачатур — «дающий, дарующий крест». В основе имени великого композитора лежит эта семантика, так что Арам Ильич Хачатурян, в чьем маскарадовском вальсе, возможно, кружилась бабушка или мать скинхедская — от «крест дарящих», от осеняющих крестом христианами».

Уместно вспомнить, что в знаменитой книге Джойса «Поминки по Финнегану», написанной как бы на нескольких языках, из армянского взяты два слова, одно из которых «хачкар» — «крест-камень». В вольном переводе на скинхедский — надгробие для Хачика. Тьфу.

Родительный: кого? чего? — ХАЧИКА

Европейские столицы перенаселены выходцами из бывших колоний. Тому объяснения дают политики, социологи, экономисты. Где-то я вычитал о синдроме детства: когда взрослого уже человека обижают, он нередко идет к родителям, бессознательно ища у них защиты. Помните, лет десять назад знакомый биолог, получивший образование в московском вузе и достаточно долгое время проработавший в российских НИИ, без толку промаявшись в Ереване, махнул рукой: «Поеду-ка в Москву, там мои друзья, там меня поймут». Биолог был армянином, правда, русскоязычным. Он чувствовал белокаменную Москву ближе розовотуфтового Еревана. Не тот ли самый синдром — искать защиту там, где привык ее находить? В столице некогда Родины, поменьше, пядь за пядью, заросшей травой забвения родственных отношений.

Конечно, сейчас произносить монологи о нерушимости и зажигать факелы дружбы — все равно что стрелять холостыми в воздух. А тезис о совместно пролитой крови на фронтах вслух произносить — почти пошлость. Вон бритоголовая братва высказалась в том духе, что, дескать, зря немцев не пустили в Сибирь — жидов



не осталось бы.

Вообще, Великая Отечественная для нерусских, но экс-советских давно уже обрела статус Второй мировой войны. Какая может быть Отечественная без Отечества? Празднование Дня Победы в этом году отразило изменения: речи и телевизионные картинки рисовали историю таким образом, будто с фашизмом расправились одни русские. Выходит, армяне, грузины, узбеки, казахи, азербайджанцы — короче, все остальные были наемниками. Теперь уже вряд ли кто утешит тех же старых армянских солдат — дедов этих самых хачиков.

А на что обижаться-то? Читая под чьим-нибудь некрологом подпись: «Группа товарищей», я немедленно впадаю в депрессию. Как же так? Жил человек и за свою жизнь пожал сотни тысяч рук, миллион раз от души улыбался, километры прошествовал в похоронных процессиях, творил добро и, как говорят у нас, бросал в воду, не ожидая воздаяний, лечил чужих детишек, считая их своими, помогал другим строить, отстраиваться, перестраиваться, достраивать, устраиваться, поднимал тосты во здравие, а товарищей всего-ничего — группа. Остальные, выходцы, легион? Так?

Именованные числа несут в себе определенную философию. В РФ, говорят, около двух миллионов армян, из коих тысяч восемьсот в столице и примерно столько же на Кубани. И впрямь давненько осели на российских землях сородичи, аж со времен Петра Великого и Екатерины Второй. Эти самодержцы по-всякому поощряли переселение армян на юг не за красивые глаза, конечно: во-первых, трудолюбивы, а во-вторых, живой щит против извечного врага — Османской империи. Начинка бутерброда Россия — Турция.

Отсюда и началась многочастная симфония о единой вере, духовной близости, традиционно прорусской ориентации. Нечто серьезное и общее, разумеется, в наличии имеется, но подсолнух поворачивается к солнцу в хорошую погоду, а в непогоду, в ненастье он обращает взор в

другую сторону, необязательно противоположную, может, даже вовнутрь.

Дательный: кому? чему? — ХАЧИКУ

Хачиков, фигурально выражаясь, распинают от Москвы до самых до окраин: в Красноармейске, Новосибирске, Краснодаре. Бить своих стратегических союзников (а у нас российские базы и военный договор, и не первый день путь к сердцу республики проходит через министерство обороны) из Араратской долины нынче стало ксенофобской попой.

«В Москве быть армянином как знак опасности, — уверяет председатель правления Московского национального армянского клуба Смбаг Караханян. — На дню нам звонят полторы сотни армян, просят помощи, говорят, что их избивают и преследуют. За несколько месяцев произошло шесть убийств. К призывам о помощи милиция глуха и реагирует цинично».

Неужели и вправду товарищей — группа? И это в России?

Винительный: кого? что? — ХАЧИКА

Они, действительно, существа нагловатые, нахрапистые, и тут нас самих доставали. Хачик для Хичкока.

Не думаю, что какой-либо народ может превозносить свою шваль. К тому же это бесстыдное племя удачливо, иной раз, быть может, именно в силу своего бесстыдства и неразборчивости в средствах достижения финансовых целей. Прибавьте к этому портрету и визг тормозов джипменов, и вопиющее бескультурье, и весь тот поведенческий спектр, возникающий при внезапной метаморфозе люмпена-неудачника в состоятельную единицу при «бабках». Креста нет на подобном хачике.

Вы что, рехнулись, считая сие чисто армянским явлением? У вас что, мало примеров из страны березового ситца? «Всякая торговля, — делились наблюдениями братья Гонкуры, — превращает человека в мошенника — законного, если хотите, но все же мошенника».

Расхожая истина: преступник не имеет национальности. Дурак тоже, поверьте. И Хлестаков безнационален, и Чичиков, и выродец Чикатило, и унтер Пришибеев, и скинхеды, кстати. Да, они не имеют национальности, однако ж имеют, хоть и разную, географическую прописку, но конкретную историческую родину: в одном случае — тюрьма, в другом — жестокое и злое сердце, в третьем — бритая и дурная голова, где резвятся юные черви многообещающего негодяя. А чье хачье? Если уж гастролируют в российских городах, пусть там и найдут свою кару. Порядочный совершенно безразлично отно-

сится к тому, кто взял верх в бандитских разборках: русские выдавили чеченцев, армяне перестреляли своих противников — да хоть все наоборот!

Пропади они пропадом. Но когда с железными прутьями, битами... Но когда по заранее составленным по этническому признаку спискам... Но когда в подземном переходе юноше выкалывают глаз только за то, что его отец — армянин... А если бы еще ему передалась еврейская картавость мамы? Без двух остался бы.

В общем-то, в нормальных государствах чужих не пускают, а допущенных сажают, если провинился. Чиновники же, что в России, что в Армении ценят более всего водяные знаки внимания.

Судя по рассказам, милиция в авангарде этого почина. (Хотя какой же это почин! Перечитайте «Былое и думы» Герцена — своих благородных россиян не щадили.) Легко догадаться, что движение скин-юнгов повышает курс водяных знаков особого внимания к лицам кавказской национальности. А бычки, бритоголовые иваны, не помнящие родства, громят могильные плиты теперь уже без разбору, бьют азербайджанцев на рынках, пускают в ход дубинки в подмосковных домах армянских семей. А постарше которые, властью облеченные, объявляют войну, грозя Грузии.

Верный признак серьезного нервного расстройства государственного организма — нетерпимость к чужим безотносительно к тому, в гостях они или у себя дома.

Творительный: кем? чем? — ХАЧИКОМ

Короче, криминальным хачикам объяви крестовый поход, и тогда хачикизму придет конец? Даже если скинхедов считать молодой гвардией российского общества, малость сомневаюсь, что кремлевские власти наделили штурмовиков полномочиями наносить групповые удары по чужакам. Что за удовольствие уподобляться террористу Агдже, сочинявшему антиармянские стихи, которые не нравились даже турецким полицейским?

В конце концов, не нравятся армяне — не смотри цветное телевидение, его изобрел Ованес Адамян, отвернись от холстов Айвазовского, покрый, наконец, матом матушку Суворова — она имела не-

счастье армянкой родиться; вас раздражают азербайджанцы — ну выключи Муслима Магомаева! И с грузинами не особенно церемонься — эка важность Вахтанг Кикабидзе или Нани Бреговдзе! Да и вообще весь Кавказ, черный-пречерный, смуглый-пресмуглый, нагловатый донельзя, не желающий никак смирить гордыню, произносящий длинные тосты вместо того, чтобы сразу хлопнуть, плеснуть в хайло, как в каменку, резко вскидывающий ноги и руки в танце — асса!

Туда ссылали умниц русских — поэтов, офицеров, необыкновенно совестливых людей. И они прикипали сердцем к этим могучим горам, крепким и работающим их обителям. Подумать только!

Скажете, утрируем и педалируем не те ноты? Возражать не стану. Но сведение к абсурду связано с тем, что на кремлевском олимпе глухи к политкорректным суждениям, зато чутки к новоязу — гремучему языку плаката (а по вкусу — шашлык из свинства, эти факты, жаренные на кем-то нарочно подлитом масле).

Любо цитировать атамана Кубанского казачьего войска Владимира Громова: «Армяне отличаются живостью, предприимчивостью и активностью в бизнесе в отличие от русских, а на фоне общей бедности обилие армян в торговле и бизнесе воспринимается местным населением отрицательно». А русский промышленник Шустов стоял у истоков армянского коньяка — нормально. А армянские купцы помогали Шаляпину — нормально, ну ясно, нормально... Нет, спрячу-ка поглубже свою ракетницу из советского реквизита.

В длинной-предлинной летописи взаимосвязей двух народов сотворено много чего хорошего. Творительный падеж, пожалуйста, работал на полную скорость.

Предложный: о ком? о чем? — о ХАЧИКЕ

Стоны Хачика мало кто всерьез воспринимает. В подмосковном Красноармейске люди в форме опоздали на пару часов: точность — вежливость милиции. Армянское посольство молчало целые сутки. Полагают, растерялись, а по-моему, выполняли установку официального Еревана. Да что там мидовские службисты — президентны держат рот на замке, будто в почетном карауле стоят. И как это удастся в сплошь каменной Армении го-

лову зарыть в песок?!

Не мое это иностранное дело упрекать российского президента: он хранил паузу в день геноцида армян — 24 апреля, когда Джордж Буш выражал сожаление; он безмолвствует, нежно глядя на экран, где плачут дети разных народов — о, великий шелковый Путин, молчание его далеко слышно...

Ереванские аналитики прикидывают и так и сяк — то на турецкий фашизм указывают, то глухо намекают на неких желающих перевести стрелки с себя на армян, то видят в этом проделки недругов, встревоженных сложением оси Тегеран — Ереван — Москва. А кто-то высказал вслух соображение, что, дескать, Кремль руками «красноармейцев» желает проучить Ереван за флирт с Западом, переросший в роман. Выражаются эти мнения, заметьте, с превеликим смущением, ибо их авторы — русскоязычные армяне, преданно, постоянно, ни разу и ни на йоту не уклонившиеся от ориентации на север. Что же касается радикальной оппозиции, то она потирает ручки: «Блеф — ваше военное союзничество!»

Национальная наша совесть великий классик Ованес Туманян отвечал поэту Аветику Исаакяну в Венецию: «Получил твое письмо. Говоришь, ежели времена подходящие — скажи, приеду.

Не знаю, какие времена ты называешь подходящими, но я говорю тебе:

— Приезжай!

— Приезжай, Аво джан!

Для нас таких подходящих времен не было и, быть может, не будет, но ты приезжай.

Приедешь — увидишь, что край наш разрушен, народ наш перебит, оставшиеся в живых надломлены, ряды друзей и близких поредели. Увидишь, как много досталось на нашу с тобой долю из этого мирского океана горя, но приезжай.

Я знаю, что и там для тебя ничего подходящего нет: ни места, ни времени, ни среды, ни средств.

Наконец, ты, верно, соскучился по нашей земле и воде, по своим родным и друзьям.

...Ну так приезжай, Аво родной».

Грустно, честное слово.

Иосиф ВЕРДИАН.

Сказка про Колобка (на новый лад)

Жил-был на свете скинхед по кличке Колобок. Когда он обмазывал свою бритую голову яичным взбитым белком, то блеснул в радиусе ста километров. Он говорил:

— Никакой жалости! Всех тех, кого зовут гатой, надо сажать в духовку (за неимением газовой камеры!) и жечь до почернения.

Когда Колобок злился, в его глазах-изюминках сверкала свастика. Больше всех книг он любил «Майн кампф» Гитлера. На каждом углу провозглашал:

— Россия только для русских!

И вот однажды ночью он видит сон — прилетел ангел и сказал:

— Послушай, Колобок, ты помнишь, что стало с Вавилонской башней после того, как оттуда ушел Айк? Она разрушилась, и между людьми началась рознь. А что случилось с СССР после отделения Армении? То же самое. Пожалея Россию. Колобок, не гони из нее армянскую гату. Не преследуй также грузинские хачапури или еврейскую мацу. Господь для всех един, а ты называешь себя последовате-

лем Заратустры. Что ты знаешь о нем? Побойся гнева Божьего!

Колобок вскочил с постели в страхе и холодном поту и закричал:

— Прости меня, Боже!

С тех пор он раскаялся, отрастил шеvelюру, а вместо глаз-изюминок вставил себе сушеные абрикосы в знак солидарности с армянской гатой, с которой он теперь дружит. И если кто-то ее обидит, то будет иметь дело с Колобком.

Мария ПАУЛЬСКАЯ.

ПЕРЕМЕНЫ ЕСТЬ, ХОТЯ ТРАДИЦИИ ДЕРЖАТСЯ



«Самое важное - национальное самосознание, то, кем человек себя осознает», - считает Алла ТЕР-САРКИСЯНЦ.

Наша соотечественница Алла Ервандовна Тер-Саркисянц - известный этнограф, доктор исторических наук, ведущий научный сотрудник Института этнологии и антропологии Российской академии наук. Родилась и выросла Алла Ервандовна в Москве, здесь же окончила исторический факультет МГУ им. Ломоносова, сделала блестящую научную карьеру. Ее предки со стороны отца - выходцы из Нагорного Карабаха, мать - уроженка Баку, одна из достойнейших представительниц княжеского рода Орбеянов...

- Алла Ервандовна, выбирая профессию этнографа, вы уже знали, что посвятите свою жизнь изучению именно армянского этноса?

